ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2017

Բովանդակություն

Ներածություն 3

1. Հանցավորության ընդհանուր վիճակը, կառուցվածքը, շարժընթացը, հանցագործությունների բացահայտումը 4

1) Մարդու դեմ ուղղված հանցագործություններ..... 7
2) Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ..... 12
3) Ընդհանուր բնույթի հանցագործություններ 15

2. Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ 18

1) Մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերի վերաբերյալ..... 18
2) Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի վերաբերյալ..... 23
3) ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերի վերաբերյալ... 27
4) Հատկապես կարևոր գործերով քննության վերաբերյալ..... 28

3. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ 30

4. Պետական շահերի պաշտպանության ոլորտ 38

5.Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ 41

6. Միջազգային-իրավական օգնության ոլորտ 45

7. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման ոլորտ..... 48

8. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ..... 52

1) Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ 52
2) Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ 55
3) Պետական շահերի պաշտպանության ոլորտ 57
4) Պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ..... 57

9. Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման ոլորտ..... 59

10. ՀՀ դատախազության պետական ծառայության ոլորտ 62

11. Աղյուսակներ..... 65

Ներածություն

Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, գործող օրենսդրությամբ, միջազգային-իրավական համապատասխան ակտերով, Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի որոշումներով և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամաններով, 2016թ. ընթացքում որոշակի աշխատանքներ է կատարել հանրապետությունում հանցավորության կանխարգելման, հանցագործությունների բացահայտման, դատախազական գործունեության որակի և արդյունավետության բարձրացման, հետաքննության և նախաքննության, մեղադրանքի պաշտպանության, դատական ակտերի բողոքարկման, պետական շահերի պաշտպանության, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, օրինականության պահպանման և քաղաքացիների իրավունքների պաշտպանության ոլորտներում:

Սույն հաղորդմամբ ներկայացվում են ՀՀ դատախազության կատարած աշխատանքի արդյունքներն ամբողջացնող վիճակագրական տվյալներն՝ ըստ գործունեության առանձին ոլորտների, այդ տվյալներից բխող գործունեության կոնկրետ ոլորտում դրսևորված օրինաչափություններն ու խնդիրները, դրանց լուծման նպատակով ձեռնարկված և ձեռնարկվելիք միջոցառումները:

Հաղորդման մեջ շեշտադրված են կատարված աշխատանքի այն արդյունքները, որոնք շոշափելի կերպով արտահայտում են ՀՀ Ազգային ժողովում ՀՀ գլխավոր դատախազի նշանակման հարցը քննարկելիս ներկայացված առաջնահերթությունների կյանքի կոչումը կարճ ժամանակահատվածում:

Ներկայացված են ամենօրյա աշխատանքում կամ առանձին ուսումնասիրություններով վեր հանված՝ քրեական դատավարությունում մարդու իրավունքների երաշխավորմանը և քրեական գործերի քննության որակի բարձրացմանը վերաբերող խնդիրներն ու դրանց լուծումները, ընդգծված են բազմաթիվ գործնական խնդիրների խոր համակարգային ուսումնասիրությունները, դրանց բազմակողմ քննարկումներն ու լուծումները, որոնք տրվել են դատախազության կոլեգիալ մարմինների արդյունավետ և ակտիվ աշխատանքի արդյունքում:

Կատարված աշխատանքի արդյունքները հաղորդման մեջ ներկայացվել են դրա այն բաժանմանը համապատասխան, որով ապահովվել է գործունեության կոնկրետ ուղղություններում դատախազության՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների իրականացումը: Այդպիսի տարանջատումը թույլ է տալիս վեր հանել կոնկրետ տվյալ ոլորտին բնորոշ դրական կամ բացասական օրինաչափություններն ու խնդիրները, սահմանել այնպիսի լուծումներ, որոնք համապատասխանում են հատկապես այդ ոլորտում քրեական քաղաքականության բացառիկ առանձնահատկություններին:

1. Հանցավորության վիճակը, կառուցվածքը, շարժընթացը, հանցագործությունների բացահայտումը

2016թ. ընթացքում գրանցվել է հանցագործության 18764 (2015թ.՝ 17043) դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 1721-ով կամ 10.1%-ով: Բացահայտումը կազմել է 78.5% (2015թ.՝ 75.7%), այսինքն՝ բացահայտումն աճել է 2.8%-ով:

2016թ. գրանցվել է բացահայտման տոկոսում հաշվառվող հանցագործության 17373 (2015թ.՝ 17014) դեպք, աճը կազմել է 359 դեպք կամ 2.1%: Բացահայտման տոկոսում հաշվառվող հանցագործությունների գծով բացահայտումը կազմել է 76.8%, (2015թ.՝ 75.7%), աճը կազմել է 1.1%:

Արձանագրվել է հրազենի գործադրմամբ կատարված հանցագործության 65 (2015թ.՝ 69) դեպք, որոնցից բացահայտվել է 57-ը (2015թ.՝ 56) կամ 87.7%-ը (2015թ.՝ 81.2%):

2016թ. հանցագործության դեպքերը 71-ով կամ 3.3%-ով (2127-2056) նվազել են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում և 27 դեպքով կամ 4.1%-ով (659-632) Տավուշի մարզում, իսկ մյուս մարզերում և վարչական շրջաններում հանցագործության դեպքերն աճել են, ընդ որում՝ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ 181 դեպքով կամ 35.8%-ով (686-505), Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում՝ 217 դեպքով կամ 28.6%-ով (975-758), Արագածոտնի մարզում՝ 109 դեպքով կամ 20-%-ով (546-655):

2016թ. հանցագործության դեպքերի բացահայտման ցուցանիշը նվազել է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում՝ 0.5%-ով (65.6%-65.1%) և Արմավիրի մարզում՝ 0.3%-ով (86.1%-85.8%): Մյուս մարզերում և վարչական շրջաններում բացահայտման ցուցանիշն աճել է, ընդ որում՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ 6.6%-ով (79.9%-73.3%), Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում՝ 5.6%-ով (61.6%-56.0%), Շենգավիթ վարչական շրջանում՝ 4.4%-ով (79.5%-75.1%), Կոտայքի մարզում՝ 5.1%-ով (79.5%-74.4%), Շիրակի մարզում՝ 4.4%-ով (86.1%-81.7%):

Հանցագործությունների բացահայտման ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են Վայոց ձորի մարզում՝ 95.5%, Տավուշի մարզում՝ 93.8%, Գեղարքունիքի մարզում՝ 91.8%, իսկ ամենացածր ցուցանիշները՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում՝ 61.6%, Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում՝ 63.6%, Արաբկիր վարչական շրջանում՝ 65.1%:

2016թ. հանցավորության ընդհանուր կառուցվածքում աճել են միջին ծանրության և առանձնապես ծանր հանցագործությունները, իսկ ծանր հանցագործության դեպքերը նվազել են: Այսպես, միջին ծանրության հանցագործություններն աճել են 273 դեպքով կամ 6.1%-ով (4455-4728), առանձնապես ծանր հանցագործությունները՝ 33 դեպքով կամ 20.0%-ով (165-198), իսկ ծանր հանցագործության դեպքերը նվազել են 157 դեպքով կամ 4.8%-ով (3238-3081):

Ծանր հանցագործության դեպքերն աճել են՝ 19 դեպքով կամ 22.6%-ով (103-84) Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում, 36 դեպքով կամ 19.6%-ով (220-184) Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում, 23 դեպքով կամ 10.4%-ով (245-222) Շենգավիթ վարչական շրջանում, 4 դեպքով կամ 2.1%-ով (194-190) Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջաններում, 11 դեպքով կամ 11.2%-ով (109-98) Սյունիքի մարզում, 8 դեպքով կամ 10.8%-ով (82-74) Գեղարքունիքի մարզում, 4 դեպքով կամ 33.3%-ով (16-

12) Վայոց ձորի մարզում, 4 դեպքով կամ 2.5%-ով (162-158) Շիրակի մարզում, իսկ մյուս վարչական շրջաններում և մարզերում ծանր հանցագործությունների դեպքերը նվազել են, ընդ որում՝ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում՝ 143 դեպքով կամ 25.2%-ով (424-567), Արագածոտնի մարզում՝ 13 դեպքով կամ 15.7%-ով (70-83), Արաբկիր վարչական շրջանում՝ 32 դեպքով կամ 13.0%-ով (215-247):

Առանձնապես ծանր հանցագործության դեպքերն աճել են 5 դեպքով կամ 83.3%-ով (11-6) Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում, 5 դեպքով կամ 71.4%-ով (12-7) Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում, 3 դեպքով կամ 60%-ով (8-5) Արաբկիր վարչական շրջանում, 3 դեպքով կամ 42.9%-ով (10-7) Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում, 3 դեպքով կամ 21.4%-ով (17-14) Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում, 4 դեպքով կամ 33.3%-ով (16-12) Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջաններում, 16 դեպքով կամ 200%-ով (24-8) Կոտայքի մարզում, 9 դեպքով կամ 180%-ով (14-5) Սյունիքի մարզում, 8 դեպքով կամ 114.3%-ով (15-7) Լոռու մարզում, 5 դեպքով կամ 71.4%-ով (12-7) Տավուշի մարզում, 5 դեպքով կամ 62.5%-ով (13-8) Շիրակի մարզում, 1 դեպքով կամ 25%-ով (5-4) Գեղարքունիքի մարզում, իսկ մյուս վարչական շրջաններում և մարզերում առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերը նվազել են, ընդ որում՝ Արարատի մարզում՝ 13 դեպքով կամ 76.5%-ով (4-17), Արագածոտնի մարզում՝ 3 դեպքով կամ 42.9%-ով (4-7), Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջաններում՝ 5 դեպքով կամ 38.5%-ով (8-13):

2016թ. նախորդ տարվա համեմատությամբ նվազել են՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 78-ով (4973-4895) կամ 1.6%-ով և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 214-ով կամ 26.2%-ով (816-602): Դրան հակառակ, աճել են հասարակական անվտանգության և կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 153-ով (2786-2939) կամ 5.5%-ով, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 413-ով (7328-7741) կամ 5.6%-ով, որոնցից սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերը՝ 18-ով (497-515) կամ 3.6%-ով, պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 1451-ով (1076-2527) կամ 134.9%-ով:

2016թ. հանցագործություն կատարած 293 անձ եղել է նախկինում դատապարտված, որոնցից 143-ը՝ 2 և ավելի անգամ: Համեմատության համար նշենք, որ 2015թ. հանցագործություն կատարած անձանցից նախկինում դատապարտված է եղել 288-ը, որոնցից 140-ը՝ 2 և ավելի անգամ: Ընդ որում, նախկինում դատապարտված անձանցից 34-ը 2016թ. հանցանք կատարել են Երևան քաղաքում, իսկ 259-ը՝ մարզերում:

Կրկնահանցագործությունների մակարդակը իրականացվող քրեական քաղաքականության արդյունավետության գնահատման հիմնական չափանիշներից է: Այն ցույց է տալիս, թե կատարված հանցանքի համար կիրառված քրեաիրավական ներգործության միջոցը որքան էր արդյունավետ՝ նոր հանցանքի կատարումը կանխելու տեսանկյունից: Հետևաբար, կրկնահանցագործությունների վերաբերյալ հստակ ցուցանիշների, դրանց դինամիկայի վերհանումը հույժ կարևոր է որդեգրված պատժողական քաղաքականության ճշտությունը գնահատելու և անհրաժեշտության դեպքում՝ դրա առանձին ուղղությունները վերափոխելու համար:

Հատկանշական է, որ կրկնահանցագործների վերաբերյալ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի և ՀՀ գլխավոր դատախազության ենթակա տարածքային դատախազությունների տվյալների միջև առկա են էական անհամապատասխանություններ: Մասնավորապես, ըստ տարածքային դատախազություններում առկա տվյալների՝ 2016թ. Երևան քաղաքում հանցագործություն կատարած 75 անձ և մարզերում 326 անձ եղել են նախկինում դատապարտված, մինչդեռ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված տվյալների համաձայն՝ նշված անձինք, համապատասխանաբար, Երևան քաղաքում եղել են 34-ը, մարզերում՝ 259-ը:

Պարզվել է, որ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի թվային ցուցանիշները չեն արտացոլում կրկնահանցագործների իրական պատկերը, ինչն ըստ նախնական ուսումնասիրությունների, ունի երկու պատճառ: Նախ՝ առանձին դեպքերում քննիչները և հետաքննիչները գործի, նյութի ընթացքը լուծելիս թերի են լրացնում հանցանք կատարած անձի վերաբերյալ վիճակագրական քարտերը: Բացի այդ, ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում որպես կրկնահանցագործ հաշվառվում են բացառապես դատապարտվածները: Այն անձինք, որոնք կատարել են հանցանք, սակայն տուժողի բողոքի բացակայության կամ կողմերի հաշտության հիմքով ազատվել են քրեական պատասխանատվությունից, որպես կրկնահանցագործ չեն հաշվառվում, ինչը արդարացված չի կարող համարվել:

Նշված խնդիրը քննարկվել է ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում, որի արդյունքում դատախազության տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է ապահովել, որպեսզի հանցանք կատարած անձի վերաբերյալ լրացվող վիճակագրական քարտերում արտացոլվեն անձի վերաբերյալ բոլոր, այդ թվում՝ դատվածություն ունենալու տվյալները, հետագայում կրկնահանցագործների վերաբերյալ ՀՀ ոստիկանությունում պատշաճ հաշվառում իրականացնելու նպատակով: Այդ տվյալների ամբողջական պարզումն ու հետագա մանրակրիտ վերլուծությունները պետք է վկայեն որդեգրված քրեական քաղաքականության՝ պատժի նպատակների իրացման տեսանկյունից արդյունավետության մակարդակի մասին՝ դառնալով նախականխիչ միջոցառումների և պատժողական քաղաքականության դրսևորումների համապատասխան փոփոխությունների առիթ:

2016թ. արձանագրվել է անչափահասի կողմից կատարված հանցագործության 351 դեպք (2015թ.՝ 385), այդ թվում՝ Երևան քաղաքում արձանագրվել է անչափահասների կողմից կատարված հանցագործության 155 դեպք (2015թ.՝ 154), իսկ մարզերում՝ 196 դեպք (2015թ.՝ 231):

2016թ. հետախուզվել են 14353 հանցագործություն կատարած անձինք, որոնցից 1655-ը կամ 11.5%-ը հայտնաբերվել են:

2017թ. հունվարի 1-ի դրությամբ հետախուզման մեջ է մնացել 12698 հանցագործ, որոնցից 11286-ը կատարել է միջին ծանրության, 792-ը՝ ծանր, 214-ը՝ առանձնապես ծանր, իսկ 406-ը՝ ոչ մեծ ծանրության հանցագործություն:

Նշված 12698 հետախուզվողից 10741-ը հետախուզվում է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով (ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը), իսկ 1957-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածների հատկանիշներով, այդ թվում, 57-ը՝ սպանության, 24-ը՝ սպանության փորձի, 108-ը՝ դիտավորությամբ

առողջությանը վնաս պատճառելու, որից 80-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 22-ը՝ թրաֆիքինգի, 17-ը՝ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների, որից 4-ը՝ բռնաբարության, 60-ը՝ մարդու դեմ ուղղված այլ հանցագործությունների, 7-ը՝ բանդիտիզմի, 20-ը՝ հրազեն, ռազմամթերք պատրաստելու և ապօրինի շրջանառելու, 11-ը՝ ՃԵԿ խախտելու, 57-ը՝ խուլիգանության, 101-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, 27-ը՝ հասարակական անվտանհության, կարգի դեմ ուղղված այլ հանցագործությունների, 64-ը՝ ավազակության, 16-ը՝ կողոպուտի, 144-ը՝ գողության, 118-ը՝ յուրացման, 493-ը՝ խարդախության, 7-ը՝ տրանսպորտային միջոցներ փախցնելու, 22-ը՝ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների, 220-ը՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների, 232-ը՝ պետական իշխանության, ծառայության և կառավարման դեմ ուղղված հանցագործությունների, 33-ը այլ հանցագործությունների կատարման համար:

1) Մարդու դեմ ուղղված հանցագործություններ.

2016թ. գրանցվել է մարդու դեմ ուղղված հանցագործության 4895 (2015թ.՝ 4973) դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 78-ով կամ 1.6%-ով: Ընդ որում, նվազել են բռնաբարության ու բռնաբարության փորձի դեպքերը (39-25) և անձի դեմ ուղղված այլ հանցագործությունները (3663-3517):

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշում գրեթե էական փոփոխություն չի արձանագրվել: 2016թ. բացահայտումը կազմել է 95.7% (2015թ.՝ 96.1%), այսինքն՝ նվազումը կազմել է 1.6%:

2016թ. մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի բացահայտման հանրապետական միջին ցուցանիշից (95.7%) ցածր ցուցանիշ է արձանագրվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ (90.6%), Արաբկիր (91.3%), Աջափնյակ և Դավթաշեն (91.4%) վարչական շրջաններում, Շիրակի մարզում (92.8%):

2016թ. նախորդ տարվա համեմատությամբ սպանության դեպքերն աճել են 14-ով (52-66) կամ 26.9%-ով, սպանության փորձի դեպքերը՝ 1-ով (35-36) կամ 2.9%-ով, իսկ առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերը՝ 27-ով (173-200) կամ 15.6%-ով:

Սպանության 66 դեպքից 27-ը կամ 41%-ը կատարվել է Երևան քաղաքում, այդ թվում՝ 5-ական՝ Մալաթիա-Սեբաստիա, Ավան և Նոր Նորք, Աջափնյակ և Դավիթաշեն, 4-ական՝ Էրեբունի և Նուբարաշեն, Կենտրոն և Նորք-Մարաշ, 2-ական Շենգավիթ, Արաբկիր վարչական շրջաններում, իսկ 39-ը կամ 59.0%-ը կատարվել են մարզերում, այդ թվում՝ 10-ը՝ Լոռու, 7-ը՝ Շիրակի, 6-ը՝ Տավուշի, 5-ը՝ Կոտայքի, 4-ը՝ Արմավիրի, 2-ական՝ Արարատի, Գեղարքունիքի, 1-ական՝ Վայոց ձորի, Արագածոտնի, Սյունիքի մարզերում:

2016թ. նախորդ տարվա համեմատությամբ սպանության դեպքերի էական աճ է գրանցվել՝ Լոռու մարզում՝ 8 դեպքով (2-10) կամ 400%-ով, Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում՝ 3 դեպքով (2-5) կամ 150.0%-ով, Տավուշի մարզում՝ 3 դեպքով (3-6) կամ 100%-ով, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջաններում՝ 2 դեպքով (2-4) կամ 100%-ով, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում՝ 2 դեպքով (2-4) կամ 100 %-ով, Արաբկիր վարչական շրջանում՝ 2 դեպքով (0-2):

2016թ. նախորդ տարվա համեմատությամբ աճել է սպանությունների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 75.8%՝ նախորդ տարվա 71.2%-ի դիմաց: Սպանության 66 դեպքից բացահայտվել է 50-ը, նախորդ տարի 52 դեպքից բացահայտվել էր 37-ը:

Սպանության չբացահայտված 16 դեպքից 5-ը գրանցվել է Երևան քաղաքում, այդ թվում՝ 3-ը՝ Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում, 1-ական՝ Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր վարչական շրջաններում, 11-ը՝ մարզերում, այդ թվում՝ 4-ը՝ Կոտայքի, 2-ական՝ Տավուշի, Արմավիրի, 1-ական՝ Լոռու, Շիրակի, Սյունիքի մարզերում:

2016թ. սպանության դեպքերի բացահայտման ցածր ցուցանիշ է արձանագրվել Կոտայքի մարզում (20%) և Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում (40%):

2016թ. նախորդ տարվա համեմատությամբ սպանության փորձի դեպքերի աճ է արձանագրվել՝ 3 դեպքով (1-4) Երևան քաղաքի Շենգավիթ, 2 դեպքով՝ Արաբկիր (1-3), 2 դեպքով՝ Մալաթիա-Սեբաստիա (0-2), 1 դեպքով՝ Քանաքեռ-Զեյթուն (1-2) վարչական շրջաններում, 5 դեպքով՝ Կոտայքի (2-7), 1 դեպքով՝ Տավուշի (3-4) մարզերում:

2016թ. գրանցված սպանության փորձերի դեպքերի բացահայտման ցուցանիշը աճել է՝ կազմելով 94.4%՝ նախորդ տարվա 88.6%-ի դիմաց: 2016թ. սպանության փորձի 36 դեպքից բացահայտվել է 34-ը, նախորդ տարի սպանության փորձի 35 դեպքից բացահայտվել էր 31-ը:

Սպանության փորձի 1-ական դեպք չի բացահայտվել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում և Կոտայքի մարզում:

2015-2016թթ. ընթացքում արձանագրված սպանության և սպանության փորձերի վիճակագրությունը, ըստ առանձին վարչական շրջանների և մարզերի, ներկայացված է հաղորդմանը կից թիվ 1 աղյուսակում:

2016թ. 54 դեպքով կամ 4.9%-ով աճել են դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերը (1095-1149): Միաժամանակ, 27 դեպքով կամ 15.6%-ով աճել են դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը (173-200):

Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի էական աճ է արձանագրվել՝ 10 դեպքով (12-22) կամ 83.3%-ով՝ Լոռու մարզում, 10 դեպքով (15-25) կամ 66.7%-ով՝ Շիրակի մարզում, 6 դեպքով (3-9) կամ 200%-ով՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում, 5 դեպքով (3-8) կամ 166.7%-ով՝ Գեղարքունիքի մարզում, 5 դեպքով (9-14) կամ 55.6%-ով՝ Արարատի մարզում:

Նշված հանցագործություններով բացահայտման ցուցանիշները նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոխվել: Այսպես, 2015թ. բացահայտումը կազմել է 80.9% (173 դեպքից բացահայտվել է 140-ը), իսկ 2016 թվականին՝ 80.5% (200 դեպքից բացահայտվել է 161-ը):

Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերով հանրապետությունում արձանագրված բացահայտման միջին ցուցանիշից (80.5%) էական ցածր ցուցանիշ է արձանագրվել՝ Արաբկիր վարչական շրջանում՝ 50%, Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում՝ 60%, Գեղարքունիքի մարզում՝ 62.5% և Արագածոտնի մարզում՝ 66.7%:

Նշված հանցատեսակով բացահայտման 100%-ոց ցուցանիշ է արձանագրվել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում, Վայոց ձորի և Տավուշի մարզերում:

2015-2016թթ. ընթացքում արձանագրված դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու և առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի վիճակագրությունը,

ըստ առանձին վարչական շրջանների և մարզերի, ներկայացված է հաղորդմանը կից թիվ 2 աղյուսակում:

Նկատի ունենալով, որ սպանության, սպանության փորձի և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի հասարակական վտանգավորության աստիճանը բարձր է, ու հաշվի առնելով, որ դրանք ոչ հազվադեպ կատարվում են հասարակական վայրերում, այլ անձանց ներկայությամբ՝ հասարակության անդամների մոտ առաջացնելով անպաշտպանվածության տագնապ, հատկապես, երբ այդ հանցագործությունները կատարած անձինք չեն բացահայտվում, և խուսափելով քրեական պատասխանատվությունից, մնում են ազատության մեջ, դատախազությունը շարունակվել է մեծ ուշադրություն դարձնել այդ հանցագործությունների վերաբերյալ քննվող քրեական գործերին: Մասնավորապես՝ չբացահայտված, բարդ, ապացուցման դժվարություններ ունեցող քրեական գործերը հանգամանորեն ուսումնասիրվել, քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազությունում, դրանցով կոնկրետ ցուցումներ ու հանձնարարություններ են տրվել նախաքննության և հետաքննության մարմիններին:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարությունների կատարման պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց արդյունավետության անհրաժեշտ և բավարար մակարդակն ապահովված չէ: Շարունակում է պահպանվել յուրաքանչյուր կոնկրետ գործով ակտիվ և օպերատիվ հետախուզական միջոցառումները միայն դեպքից անմիջապես հետո իրականացնելու արատավոր պրակտիկան: Անմիջապես հաջորդող օրերին չունենալով անհրաժեշտ արդյունք, դեպքը դասվում է չբացահայտվածների շարքը և ակտիվ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ չեն իրականացվում: Տրված հանձնարարություններն ստանում են ստանդարտ պատասխաններ այն մասին, որ ձեռնարկված միջոցառումներն արդյունք չեն տվել, իսկ այդ միջոցառումների հիմքերի և արդյունքների վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք կատարված են առնվազն ձևական և առանց պատշաճ պլանավորման:

ՀՀ գլխավոր դատախազին կից խորհրդակցություններում հանձնարարվել է պատշաճ հետևողականություն ցուցաբերել քննիչի և դատախազի կողմից տրված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարությունների կատարման նկատմամբ, պատշաճ ուսումնասիրել դրանց հիմքերն ու արդյունքները, ի հայտ եկած տվյալները համադրել գործով պարզված այլ փաստական տվյալների հետ՝ ըստ դրանց պլանավորելով հետագա դատավարական գործողություններն ու օպերատիվ-հետախուզական միջոցառումները: Հանձնարարությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքեր հայտնաբերելիս կիրառել դատախազական ներգործության անհրաժեշտ միջոցներ՝ խախտումներ թույլ տված անձանց պատասխանատվության ենթարկելու և նման դեպքերը բացառելու նպատակով: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշտապես կարևորվել է նաև հետաքննության և նախաքննության մարմինների ակտիվ համագործակցությունը, անհրաժեշտ փաստական տվյալների փոխանակումն ու արդյունքում քննության արդյունավետ պլանավորումը:

Կարևորելով նշված հանցատեսակներով հարուցված քրեական գործերով հետաքննության մարմնին տրված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ հանձնարարություններում կոնկրետ բացահայտման ենթակա

հանգամանքների հստակ շարադրումը և նշված հանձնարարությունների ձևական բնույթ կրելը բացառելը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է վերանայել սպանության, սպանության փորձերով և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերով ինչպես ընթացիկ, այնպես էլ վարույթները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով կասեցված քրեական գործերով տրված հանձնարարությունները, դրանք թերի կամ ոչ լիարժեք լինելու դեպքում կրկին հանձնարարություններ տալ ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին, իսկ այն դեպքերում, երբ այդ հանձնարարությունները տրվել են պատշաճ ձևով, սակայն չեն կատարվել ՀՀ ոստիկանության մարմինների կողմից, հանձնարարություններ տրվեն ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից:

Բացառիկ կարևոր համարելով մարդու դեմ ուղղված հանցագործությունների, հատկապես՝ սպանությունների արագ բացահայտումը, դրանց վերաբերյալ գործերի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովումը, ՀՀ դատախազությունը չի սահմանափակվում միայն դատախազի դատավարական գործիքակազմի և դրա կիրառության պրակտիկայի կատարելագործմամբ՝ վեր հանելով քննության որակի համար էական նշանակություն ունեցող այլ՝ օժանդակ գործոնների կատարելագործման խնդիրներն ու միջոցներ ձեռնարկելով այդ ուղղությամբ: Քննարկվող հանցագործությունների վերաբերյալ գործերով քննության համար էական նշանակություն ունի դատագենետիկական փորձաքննությունների հնարավորությունների կատարելագործումը և շատ պետություններում առկա գենետիկական բազայի ստեղծումը, որի կապակցությամբ նախաձեռնվել են նախնական ուսումնասիրություններ: Դատական գենետիկայի կատարելագործումն առաջին հերթին ապահովելու է գենետիկական հատկանիշների հիման վրա նույնացման ավելի բարձր չափանիշներ և ձևավորելու են պայմաններ գենետիկական նմուշների պահպանման ու հետագա դատավարական օգտագործման համար: Կատարված նախնական ուսումնասիրություններով՝ ակնկալվող արդյունքն ապահովելու համար պահանջվում է շուրջ 100 մլն ՀՀ դրամ:

Խիստ կարևոր է այս բնույթի հանցագործությունների կանխմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Այս առումով, սպանության, սպանության փորձի և առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի կանխարգելման գործում մեծ է ոչ միայն իրավապահ մարմինների և, ընդհանրապես, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, այլ նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ հասարակական կազմակերպությունների, փաստաբանների, ՋԼՄ-ների և, հատկապես, հեռուստատեսության դերը:

Կատարված վերլուծությամբ պարզվել է, որ դեռևս անելիքներ կան դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, սպանության և սպանության փորձ կատարելու համար մեղադրվող և հետախուզման մեջ գտնվող անձանց հայտնաբերելու, հանցագործությունները բացահայտելու և առավել ևս դրանք կանխելու ուղղությամբ տարվող աշխատանքներում:

Այդ նպատակով ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է մանրամասն ուսումնասիրել սպանություններով, սպանության փորձերով ու դիտավորությամբ առողջությանը ծանր

վնաս պատճառելու դեպքերով հարուցված և վարույթները կասեցված քրեական գործերը, ստուգել այդ գործերով անցնող, փախուստի մեջ գտնվող անձանց մեղադրանքի հիմնավորվածությունը, պարզել նրանց վերաբերյալ ոստիկանությունում կազմված հետախուզական գործերի առկայությունը, ճշտել քրեական գործում և հետախուզական գործում եղած մեղադրյալների անձնական տվյալների իրար համապատասխանելու հանգամանքը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ սպանության, սպանության փորձերի և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում կենցաղային հողի վրա կատարվածները: Քիչ չեն հանցագործությունն ալկոհոլ օգտագործած վիճակում կատարված դեպքերը, բավական շատ է նախկինում դատապարտված, այդ թվում՝ համասեռ հանցագործությունների համար պատիժ կրած անձանց քանակը:

Գաղտնիք չէ, որ կենցաղային հողի վրա կատարված դեպքերի մի մասը տևական ժամանակով ընթացող ընտանեկան, հարևանական վեճերի, ազգականների կամ ընկերների միջև լարված փոխհարաբերությունների հետևանք են, որոնք այս կամ այն առիթով նախկինում հայտնվել են իրավապահ մարմինների տեսադաշտում, սակայն պատշաճ ուշադրության չեն արժանացել, այդ փաստերով իրավապահ մարմիններում ստացված դիմումները խորությամբ չեն ուսումնասիրվել և լարված փոխհարաբերությունների կանխարգելման, դրանք վերացնելու ուղղությամբ բավարար միջոցներ չեն ձեռնարկվել:

Բացի այդ, քրեական գործերի քննությամբ ոչ միշտ են վեր հանվել հանցագործություն ծնող պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը, քննիչը և հետաքննության մարմինը պարտավոր են յուրաքանչյուր քրեական գործով պարզել հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները և անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավաբանական անձին կամ պաշտոնատար անձին միջնորդագիր ներկայացնել՝ այդ հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին:

Միջնորդագրերը ենթակա են պարտադիր քննարկման, որի արդյունքների մասին մեկամսյա ժամկետում գրավոր հաղորդվում է այն ուղարկած մարմնին կամ պաշտոնատար անձին:

Նշվածի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի կողմից տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է պահանջել ՀՀ ոստիկանության տարածքային մարմիններից, որ վերջիններս օպերատիվ տեսադաշտում պահեն նախկինում մարդու կյանքի և առողջության նկատմամբ հանցավոր ոտնձգության, զենք կրելու համար դատապարտված, թմրամիջոցների և հարբեցողության նկատմամբ հակումներ դրսևորող, հանցավոր աշխարհի հետ կապեր ունեցող անձանց, ինչպես նաև ձեռնարկել դատախազական ներգործության միջոցներ՝ յուրաքանչյուր դեպքում հանցագործության պատճառներն ու դրան նպաստող պայմանները քրեական գործի նախաքննությամբ պարզելու և վերացնելու ուղղությամբ: Այս առումով հանձնարարվել է հատկապես ակտիվացնել ուսումնական, ինչպես նաև պետական այլ հաստատություններում հանցագործությունների նախականխման և քրեածին միջավայրի բացառման նպատակով իրականացվող աշխատանքները:

ՀՀ դատախազության կոլեգիան քննարկել է առանձին տեսակի հանցագործությունների ընդհանուր, տիպային պատճառներն ու նպաստող պայմանները և որոշմամբ սահմանել դրանց վերացման նպատակով անհրաժեշտ կոնկրետ դատավարական միջոցներ ձեռնարկելու պարտադիր դատավարական պահանջ:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է թրաֆիքինգի դեպքերի աճ 12.5%-ով (8-9):

Ինչպես դատախազությունում, այնպես էլ մեր երկրում թրաֆիքինգի դեմ պայքարով զբաղվող շահագրգիռ հասարակական, միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունները վկայում են, որ վերջին տարիներին հանրապետությունում էապես նվազել է թրաֆիքինգի ռիսկայնությունը: Դա պայմանավորված է երևույթի մասին բնակչության՝ հատկապես խոցելի խմբերի իրազեկության բարձրացմամբ, ինչպես նաև թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ խիստ պատիժողական քաղաքականություն գործադրելու միջոցով ընդհանուր կանխարգելիչ մթնոլորտի ձևավորմամբ:

Թրաֆիքինգի դեմ իրականացվող արդյունավետ պայքարի մասին է վկայում նաև այն, որ 2016թ. հունիսի 30-ին հրապարակված մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ ԱՄՆ պետքարտուղարության տարեկան զեկույցի համաձայն Հայաստանի Հանրապետությունը 4-րդ տարին անընդմեջ ընդգրկվել է 1-ին խմբում, իսկ մարդկանց վաճառքի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի փորձագետների խմբի կողմից հրապարակված զեկույցի համաձայն Հայաստանն առաջընթաց է արձանագրել մարդկանց վաճառքը կանխելու եւ դրա դեմ պայքարելու ոլորտում:

2) Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ.

2016թ. նախորդ տարվա համեմատ 413 դեպքով կամ 5.6%-ով ավելացել են սեփականության դեմ ուղղված հանցագործությունները՝ կազմելով 7741 դեպք՝ (2015թ՝ 7328):

2016թ. սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի էական աճ է արձանագրվել՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում՝ 104 դեպքով (440-544) կամ 23.6%-ով, Գեղարքունիքի մարզում՝ 42 դեպքով կամ 27.8%-ով (151-193), Արագածոտնի մարզում՝ 31 դեպքով կամ 16.3%-ով (190-221), իսկ նվազում՝ Տավուշի մարզում՝ 50 դեպքով կամ 21.0%-ով (238-188), Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջաններում՝ 30 դեպքով կամ 6.4%-ով (469-439):

2.4%-ով աճել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 59.6%՝ նախորդ տարվա 57.2%-ի դիմաց:

2016թ. արձանագրված սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի բացահայտման հանրապետական միջին ցուցանիշից (59.6%) ցածր ցուցանիշ է արձանագրվել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն՝ 44.6%, Ավան և Նոր Նորք՝ 45.6%, Արաբկիր՝ 45.8%, Կենտրոն և Նորք-Մարաշ՝ 48.1%, Քանաքեռ-Զեյթուն՝ 50.2%, Էրեբունի և Նուբարաշեն՝ 53.1% վարչական շրջաններում, ինչպես նաև Կոտայքի մարզում՝ 59.0%:

2016թ. 420 դեպքով (6664-7084) կամ 6.3%-ով ավելացել են անձնական գույքի հափշտակության դեպքերը, մինչդեռ պետական կամ հանրային գույքի հափշտակության դեպքերը նվազել են 17-ով (110-93) կամ 15.5%-ով:

119-ով (1369-1250) կամ 8.7%-ով նվազել են բնակարանային գողության դեպքերը: Միաժամանակ, 2.5%-ով աճել է բնակարանային գողությունների բացահայտման ցուցանիշը, եթե 2015թ. այն կազմել է 30.5%, ապա 2016թ.՝ 33.0%:

Բնակարանային գողության դեպքերն ավելացել են՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ 12 դեպքով (51-63) կամ 23.5%-ով, Շենգավիթ վարչական շրջանում՝ 6 դեպքով (89-95) կամ 6.7%-ով, Տավուշի մարզում՝ 6 դեպքով (17-23) կամ 35.3%-ով, Սյունիքի մարզում՝ 10 դեպքով (29-39) կամ 34.5%-ով, Գեղարքունիքի մարզում՝ 10 դեպքով (33-43) կամ 30.3%-ով, Կոտայքի մարզում՝ 25 դեպքով (146-171) կամ 17.1%-ով և Շիրակի մարզում՝ 2 դեպքով (49-51) կամ 4.1%-ով:

2016թ. արձանագրված բնակարանային գողությունների դեպքերի բացահայտման հանրապետական միջին ցուցանիշից (33.0%) էական ցածր ցուցանիշ է արձանագրվել՝ Վայոց ձորում՝ 0% կամ 2 դեպքից՝ 0, Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում՝ 18.0% կամ 111 դեպքից՝ 20-ը, Արաբկիր վարչական շրջանում՝ 18.4% կամ 98 դեպքից՝ 18-ը, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջաններում՝ 18.6% կամ 70 դեպքից՝ 13-ը:

Կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ չբացահայտված բնակարանային գողությունների զգալի մասը կատարվել է հարմարեցված բանալիների և նույնատիպ տեխնիկական միջոցների գործադրմամբ, որը հիմք է տալիս ենթադրելու, որ հնարավոր է դրանք կատարվել են մեկ, երկու կայուն հանցավոր խմբերի կողմից, որոնցից թեկուզև մեկի բացահայտումն էականորեն կբարելավի ինչպես բնակարանային գողության, այնպես էլ սեփականության դեմ ուղղված դեպքերով բացահայտման ցուցանիշը:

Բնակարանային գողությունների դեպքերի բացահայտման ցուցանիշներին անդրադարձ է եղել ՀՀ գլխավոր դատախազի մոտ 02.11.2016թ. տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցությունում: Ընդգծելով բնակարանի անձեռնմխելիության իրավունքը խախտելով կատարված գողությունների հանրային վտանգավորության բարձր աստիճանը հատկապես սոցիալ-տնտեսական դժվարություններ ունեցող հասարակությունում, խորհրդակցությունում կարևորվել է դրանց նախականխմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու, բացահայտման ցուցանիշները, գործի քննության որակը բարելավելու անհրաժեշտությունը: ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարականի հիման վրա, ՀՀ դատախազության ստորաբաժանումների ղեկավարները վերլուծել են 2016թ. 9 ամսվա ընթացքում բնակարանային գողությունների բացահայտման ցուցանիշները, վեր են հանել առկա թերություններն ու բացթողումները և ՀՀ ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին ներկայացրել են հաղորդումներ՝ մատնանշելով հայտնաբերված թերություններն ու բացթողումները և միջնորդել են ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ դրանք վերացնելու ուղղությամբ:

Բնակարանային գողությունների նախականխման կարևոր գործողություններից մեկը դրա համար պատժողական քաղաքականության որակական փոփոխությունն է: Դատախազության կոլեգիան հիմնախնդրի քննարկմամբ սահմանել է այդ քաղաքականության վերանայման, բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների համար քրեաիրավական ներգործության միջոցները դրա վերաբերյալ վիճակագրական շարժընթացից բխեցնելու պահանջ:

Ընդհանրապես գողությունների կանխման տեսանկյունից կարևորվել է դրանց նպաստող պայմանների վերացման, օրինակ գույքի պահպանության անհրաժեշտ միջոցներ ապահովելու նպատակով համապատասխան դատավարական ներգործության միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը:

2013-2016թթ. ընթացքում արձանագրված բնակարանային գողությունների վիճակագրությունը, ըստ առանձին վարչական շրջանների և մարզերի, ներկայացված է հաղորդմանը կից թիվ 3 աղյուսակում:

Որոշակի, սակայն ոչ էական, փոփոխություններ են կատարվել նաև ավազակության դեպքերի շարժընթացում: Այսպես, եթե 2015թ. արձանագրվել է 54 դեպք, ապա 2016թ.՝ 53 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 1-ով կամ 1.9%-ով: 1.0%-ով աճել է ավազակության դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 56.6%՝ նախորդ տարվա 55.6%-ի դիմաց:

Ավազակության դեպքերն ավելացել են՝ 2-ով (3-5)՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն, 2-ով (2-4)՝ Մալաթիա-Սեբաստիա, 1-ով՝ (1-2)՝ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջաններում, ինչպես նաև 3-ով (4-7)՝ Շիրակի, 3-ով (3-6)՝ Արմավիրի, 3-ով (2-5) Կոտայքի, 2-ով (2-4) Գեղարքունիքի, 2-ով (0-2) Սյունիքի մարզերում:

2016թ. արձանագրված ավազակության դեպքերի բացահայտման հանրապետական միջին ցուցանիշից (56.6%) էական ցածր ցուցանիշ է արձանագրվել՝ Երևան քաղաքի Արաբկիր և Շենգավիթ վարչական շրջաններում՝ 33.0% կամ 3 դեպքից բացահայտվել է 1-ը, Կոտայքի մարզում 20.0% կամ 5 դեպքից բացահայտվել է 1-ը, իսկ Լոռու մարզում գրանցվել է 1 դեպք, որը չի բացահայտվել:

Հաշվի առնելով նշված հանցատեսակի վտանգավորության աստիճանը՝ ավազակության դեպքերով հարուցված քրեական գործերը մշտապես գտնվել են ՀՀ գլխավոր դատախազության ուշադրության կենտրոնում: Նշված հանցատեսակով առկա վիճակի վերլուծությունը և վիճակագրական տվյալները հաշվի առնելով՝ հանրապետության մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին հանձնարարվել է շարունակել ամենօրյա հսկողության տակ պահել այդ դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերը, իսկ վարույթը կասեցված գործերով անհրաժեշտ օպերատիվ-քննչական միջոցառումների հետևողական կատարման ընթացքը, դրանց նախականխման ուղղությամբ արդյունավետ միջոցառումներ մշակելու և այդ բնույթի դեպքերի կատարմանը նպաստող պայմանները վեր հանելու նպատակով ոստիկանության մարմինների հետ պարբերաբար կատարել ուսումնասիրություններ և վերլուծություններ:

2015-2016թթ. ընթացքում անձնական գույքի հափշտակության, այդ թվում՝ ավազակության դեպքերի վիճակագրությունը, ըստ առանձին վարչական շրջանների և մարզերի, ներկայացված է հաղորդմանը կից թիվ 4 աղյուսակում:

2016թ. նախորդ տարվա համեմատ 18-ով կամ 7.6%-ով աճել են կողոպուտի դեպքերը (237-255): Դեպքերի աճին զուգահեռ 2.2%-ով աճել է նշված դեպքերի բացահայտման ցուցանիշը, եթե 2015թ. այն կազմել է 51.5%, ապա 2016թ.՝ 53.7%:

2016թ. որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել խարդախությամբ անձնական գույքի հափշտակության դեպքերի շարժընթացում՝ արձանագրվել է նման հանցագործությունների աճ 55 դեպքով (902-957) կամ 6.1%-ով:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեռևս շարունակվում է քաղաքացիաիրավական վեճերի վերաբերյալ դատական ատյաններում քննված

գործերի արդյունքներից դժգոհ մնացած քաղաքացիների դիմումների հիման վրա նախապատրաստված նյութերով անհիմն քրեական գործերի հարուցման արատավոր երևույթը, որոնք դատական հեռանկար չեն կարող ունենալ և քննության արդյունքում կարճվում են՝ հանցակազմի կամ հանցադեպի բացակայության հիմքով:

Իրավակիրառ պրակտիկայի ամփոփումը վկայում է, որ առերևույթ խարդախության դեպքերով քննության պրակտիկան ամենաբազմազաններից է՝ թեև օրենքի միատեսակ կիրառության ապահովմանն ուղղված ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը սահմանել է որոշակի չափանիշներ խարդախության և քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման դեպքերի սահմանազտման համար: Առկա խնդիրները վեր հանելու և խարդախության որակման միասնական մոտեցումներ սահմանելու համար ՀՀ դատախազության 2017թ. 1-ին կիսամյակի աշխատանքային ծրագրով նախատեսվում է ուսումնասիրել և ամփոփել 2016թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով իրականացված դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման, ինչպես նաև մեղադրանքի պատշտպանության վիճակը:

2016թ. նախորդ տարվա համեմատ 214 դեպքով կամ 26.2%-ով նվազել են տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները՝ կազմելով 602 դեպք (2015թ.՝ 816): Ընդ որում, 21-ով կամ 45.7%-ով նվազել են ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության դեպքերը, 199-ով կամ 53.6%-ով՝ կեղծ փող, արժեթղթեր պահելու, պատրաստելու, իրացնելու դեպքերը, իսկ 62-ով կամ 65.3%-ով աճել են հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերը, 52-ով կամ 30.4%-ով՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունները:

3*) *Ընդհանուր բնույթի հանցագործություններ.

2016թ. նախորդ տարվա համեմատ 153 դեպքով կամ 5.5%-ով աճել են հասարակության անվտանգության և կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ կազմելով 2939 դեպք (2015թ՝ 2786), այդ թվում՝ Երևան քաղաքում դեպքերի աճը կազմել է 228 դեպք (973-817) կամ 27.9%: Ընդ որում, արձանագրված դեպքերի աճին զուգահեռ 0.1%-ով նվազել է նշված հանցագործությունների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 87.8%՝ նախորդ տարվա 87.9%-ի դիմաց:

2016թ. արձանագրվել է խուլիգանության 195 դեպք՝ նախորդ տարվա 184 դեպքի դիմաց, որոնցից զենքի գործադրմամբ կատարվել է 32-ը՝ նախորդ տարվա 32-ի դիմաց, այսինքն՝ խուլիգանության դեպքերը աճել են 11-ով կամ 6.0%-ով, իսկ զենքի գործադրմամբ կատարված խուլիգանությունների շարժընթացում փոփոխություն չի արձանագրվել:

2.5%-ով աճել է խուլիգանության դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 86.2%՝ նախորդ տարվա 83.7%-ի դիմաց: 12.5%-ով աճել է նաև զենքի գործադրմամբ խուլիգանությունների դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 90.6%՝ նախորդ տարվա 78.1%-ի դիմաց:

2016թ. նախորդ տարվա համեմատ 119 դեպքով կամ 19.5%-ով աճել են հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության դեպքերը՝ 729 դեպք՝ նախորդ տարվա 610 դեպքի դիմաց:

145 դեպքով կամ 17.2%-ով նվազել են ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերը: Ընդ որում, 52 դեպքով կամ 22.9%-ով նվազել են մահվան ելքով ՃԵԿ-ի խախտման դեպքերը՝ 175 դեպք՝ նախորդ տարվա 227-ի դիմաց: Դեպքերի նվազման ցուցանիշին զուգահեռ, նվազել է նաև այդ բնույթի հանցագործությունների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 95.7%՝ նախորդ տարվա 97.3%-ի դիմաց:

Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների դեպքերի նվազումը հիմնականում պետք է բացատրել փողոցներում և մայրուղիներում տեսախցիկների ու արագաչափերի տեղադրմամբ:

Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի քննության վիճակի ուսումնասիրությունն ու վերլուծությունը վկայում են, որ ոլորտի խնդիրներն առավելապես կապված են դատաավտոտեխնիկական փորձաքննությունների տևողության, դրանց ընթացքում կիրառվող մեթոդիկաների, իսկ ավելի կոնկրետ դրանց կատարելագործման անհրաժեշտության հետ:

Փորձագիտական հիմնարկներում ավտոտեխնիկ-փորձագետների հաստիքների և ընդհանրապես հանրապետությունում մասնագետների նվազ քանակը հատկապես ԱՊՊԱ ոլորտի իրավակարգավորումներից հետո առաջացած կտրուկ ծանրաբեռնվածության պայմաններում հանգեցնում է փորձաքննությունների ժամկետների ձգձգումների:

Բացի այդ, ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության մեթոդիկան, ակնհայտորեն հետ մնալով ավտոտեխնիկայի ձեռքբերումներից, չի օգտագործում օբյեկտիվ փաստական տվյալների ձեռքբերման նորագույն այնպիսի միջոցներ, որոնք ապահովում են ինչպես դրանց ամբողջականությունը, այնպես էլ էականորեն բարձր ճշգրտության աստիճանը: Մասնավորապես, 2006-2007թթ-ից բարձր տարեթվերի արտադրության մի շարք ավտոմեքենաներ հագեցած են պատահարից առաջ և դրա ընթացքում արտահայտված, դրա մեխանիզմի վերհանման համար անփոխարինելի տվյալներ պահպանող ինքնագրիչ սարքերով, որոնք միչ օրս քննչական պրակտիկայում չեն հետազոտվում և դրանց արձանագրած տվյալները չեն օգտագործվում:

Ուսումնասիրությամբ արձանագրվել է նաև, որ դատական ավտոտեխնիկայի բնագավառում կիրառվող հետազոտության մեթոդիկաները որոշ դեպքերում հնացած են, քանի որ ավտոտեխնիկայի բնագավառի ձեռքբերումները, որոնք վաղուց իրացված են ավտոարտադրության մեջ և տարբեր տեխնիկական հնարավորություններով են բնութագրում տարբեր մոդելների և մակնիշների տրանսպորտային միջոցները, այս հետազոտություններում ընդհանրապես հաշվի չեն առնվում: Միմյանցից տարբերվող արգելակման, ղեկային կառավարման և այլ համակարգերով զինված տրանսպորտային միջոցների մասնակցությամբ վթարի մեխանիզմի այս կամ այն դետալները որոշելիս կիրառվում են միևնույն, ընդ որում՝ 1960-70-ական թվականներին մշակված հաշվարկման մեթոդները:

Քննարկումները վկայում են, որ հասունացած խնդրի լուծման միջոց կարող են դառնալ ճանապարհատրանսպորտային պատահարների փորձաքննության և մոդելավորման, ինչպես նաև ինքնագրիչ սարքերի տվյալների վերծանման արտոնագրված ծրագրերի ներդրումը փորձագիտական պրակտիկայում: Ծրագրերը հնարավորություն ունեն առկա խիստ օբյեկտիվ տվյալների հիման վրա առավել ճշգրիտ հաշվարկել ու վեր հանել պատահարի հանգամանքները: Ինչպես երևում է

տեխնիկական բնութագրերից, դրանք զգալի չափով լուծում են դատաավտոտեխնիկական փորձաքննությունների պրակտիկայում առկա վերը ներկայացված խնդիրները, որոնք էապես ազդում են այս հանցագործությունների վերաբերյալ գործերով քննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության, և արդյունավետության վրա: Ներկայումս ՀՀ-ում երաշխավորված մեթոդաբանության համաձայն իրականացվող դատաավտոտեխնիկական փորձաքննությունների համեմատությամբ՝ ինքնագրիչ սարքերի տվյալների վերծանման և պատահարների փորձաքննության և մոդելավորման տեխնիկական միջոցների և ծրագրերի ներդրումը գրեթե վերացնում է նաև մարդկային միջամտության գործոնը՝ հանգեցնելով հնարավոր կոոռուպցիոն ռիսկերի չեզոքացման:

Նախնական ուսումնասիրություններն ընդ որում վկայում են, որ նշված ծրագրերի ներդրումը զգալի ֆինանսական ծախսեր չի պահանջում՝ կազմելով սկզբնական գործարկման համար ոչ ավել քան 15 մլն ՀՀ դրամ:

Դատաավտոտեխնիկական փորձաքննությունների ոլորտի նշված խնդիրները ներկայացվել են նաև ՀՀ Արդարադատության նախարարություն և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա՝ իրենց իրավասության տակ գտնվող փորձագիտական հիմնարկներում նշված խնդիրների համապատասխան լուծումներ քննարկելու համար:

2. Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

1) Մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերի վերաբերյալ.

2016թ. դատախազական հսկողություն է իրականացվել մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված ու ընդհանուր բնույթի 35677 հանցագործությունների դեպքերի վերաբերյալ նախապատրաստված և ավարտված նյութերի նկատմամբ (2015թ՝ 35880), որը 203-ով պակաս է, քան 2015թ. ընթացքում:

2016թ. նախապատրաստված 35677 նյութից 10147-ով (2015թ.՝ 10362) 28.4%-ով հարուցվել են քրեական գործեր: Ընդ որում, մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով նախապատրաստված 16057 նյութից 2324-ով կամ 14.5%-ով հարուցվել է քրեական գործ, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով նախապատրաստված 12751 նյութից՝ 6131-ով կամ 48.0%-ով, իսկ ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով նախապատրաստված 6869 նյութից՝ 1692-ով կամ 24.6%-ով:

Քրեական գործի հարուցումը մերժված 24572 նյութից 18396-ով կամ 74.9%-ով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացնող հիմքով (նախորդ տարվա 73.0%-ի դիմաց), իսկ 6176-ով կամ 25.1%-ով՝ ոչ արդարացնող հիմքով:

Ընդ որում, մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով մերժված 13484 նյութից 11390-ով կամ 84.4%-ով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացնող հիմքով, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով մերժված 6253 նյութերից՝ 3148-ով կամ 50.34%-ով, իսկ ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով մերժված 4835 նյութերից՝ 3858-ով կամ 79.7%-ով:

Նախապատրաստված և ավարտված նյութերով անցնող անձանցից 2-ը եղել է պաշտոնատար անձ, 277-ը՝ անչափահաս, 1009-ը՝ կին, 342-ը՝ նախկինում դատված, 62-ը՝ օտարերկրացի:

ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից ստուգվել է 35677 մերժված նյութերով կայացված որոշումների օրինականությունը:

Ստուգման արդյունքում քրեական գործի հարուցումը մերժելու 323 որոշում վերացվել է՝ նախորդ տարվա 310-ի դիմաց: Ընդ որում, դրանցից 9-ը վերացվել է ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Նշված 323 նյութից 174-ը նախապատրաստվել է նախաքննության, իսկ 149-ը՝ հետաքննության մարմնի կողմից:

2016թ. նախապատրաստված նյութերի նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելիս դատախազների կողմից տրվել է 122 ցուցում՝ նախորդ տարվա 47-ի դիմաց:

2016թ. դատախազական հսկողություն է իրականացվել մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված ու ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերի վերաբերյալ հարուցված և վարույթը ավարտված 5646 քրեական գործերի նկատմամբ՝ նախորդ տարվա 5788 քրեական գործերի դիմաց, այսինքն՝ նվազումը կազմել է 142 քրեական գործ: Նշված 5646 քրեական գործից 2084-ը՝ քննվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով, նախորդ տարվա

1999-ի դիմաց, 2154-ը՝ սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով՝ նախորդ տարվա 2408-ի դիմաց, 1408-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով՝ նախորդ տարվա 1381-ի դիմաց:

2016թ. ավարտված 5646 քրեական գործից 2159-ը կամ 38.2%-ը՝ 2630 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 3442-ը՝ կամ 60.1%-ը կարճվել է (այդ թվում՝ 1843-ը արդարացնող, իսկ 1599-ը՝ ոչ արդարացնող հիմքով), 45-ը կամ 0.79%-ն ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ:

Համեմատության համար նշենք, որ 2015թ. ընթացքում ավարտված 5788 քրեական գործից 2144-ը կամ 37.0%-ը՝ 2726 անձանց վերաբերյալ ուղարկվել է դատարան, 3585-ը կամ 61.9%-ը կարճվել է (այդ թվում՝ 1949-ը արդարացնող, իսկ 1636-ը՝ ոչ արդարացնող հիմքով), 49-ը կամ 1.1%-ն ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ:

ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից ստուգվել է 5028 քրեական գործով վարույթը կարճելու որոշումների օրինականություն, որոնցից 355-ով քրեական գործով վարույթը կարճելու որոշումները վերացվել են: ՀՀ գլխավոր դատախազի կողմից վերացվել է քրեական գործով վարույթը կարճելու 44 որոշում (2015թ.՝ 54):

2016թ. 5347 քրեական գործի վարույթ կասեցվել է, որոնցից՝ 4871-ը՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու, 438-ը՝ մեղադրյալի հետախուզման, 38-ը՝ այլ հիմքով: Համեմատության համար նշենք, որ 2015թ. ընթացքում կասեցվել է 5268 քրեական գործ:

ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից ստուգվել է 7669 քրեական գործով վարույթը կասեցնելու որոշումների օրինականությունը, որոնցից 305-ով որոշում է կայացվել վարույթը կասեցնելու որոշումը վերացնելու մասին:

2016թ. քրեական գործերով դատախազների կողմից տրվել է 1666 գրավոր ցուցում, որոնցից՝ 1618-ը՝ նախաքննության, 48-ը՝ հետաքննության մարմիններին:

Ցուցումների դեմ բերվել է 59 բողոք, որոնցից 13-ը բավարարվել է:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից, վերադասության կարգով, տրվել է 29 գրավոր ցուցում՝ նախորդ տարվա 44-ի դիմաց:

Քրեական գործերով տրված ցուցումները հիմնականում վերաբերվել են նախաքննության լրիվությունը, բազմակողմանիությունն ու օբյեկտիվությունը ապահովելուն ուղղված քննչական և դատավարական գործողություններ կատարելուն, մեղադրյալների արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալուն, ինչպես նաև նախաքննության և հետաքննության մարմինների արդյունավետ համագործակցությունն ապահովելուն:

2016թ. 63 քրեական գործ դատախազի կողմից վերադարձվել է լրացուցիչ նախաքննության:

Մինչդատական վարույթում ընդունված նյութերով քրեական գործերի հարուցումը մերժելու 27 որոշում (2015թ. 19) վերացվել է դատարանի կողմից, որոնցից 3-ը՝ Շենգավիթ, 1-ը՝ Էրեբունի և Նուբարաշեն, 5-ը՝ Կենտրոն և Նորք-Մարաշ, 7-ը՝ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն, 2-ը՝ Ավան և Նոր Նորք վարչական շրջաններում, ինչպես նաև 1-ական՝ Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, 4-ը՝ Արմավիրի մարզերում:

Դատարանների կողմից վերացվել է քրեական գործի վարույթը կարճելու 11 որոշում (2015թ.՝ 19), որոնցից 2-ը՝ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն, 1-ը՝ Մալաթիա-

Սեբաստիա վարչական շրջաններում, 2-ը՝ Տավուշի, 5-ը՝ Արմավիրի, 1-ը՝ Շիրակի մարզերում:

Դատարանների կողմից Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջաններում վերացվել է քրեական գործի վարույթը կասեցնելու 2 որոշում:

Քրեական գործ հարուցելը մերժելու կամ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումների վերացման հիմնական պատճառը պայմանավորված է եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջներն ապահովված չլինելով:

2016թ. ՀՀ քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների քննիչների վարույթում 4 ամսից ավելի ժամկետում քննվել է 1699 քրեական գործ:

Հիմնականում նախաքննության ժամկետները ձգձգված գործերը հարուցված են եղել ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով: Նախաքննության ժամկետները երկարացնելու հիմնական պատճառներն են եղել լրացուցիչ, կրկնակի, հանձնաժողովային, ինչպես նաև համալիր փորձաքննություններ նշանակելու անհրաժեշտությունը, հանցագործությունների բազմադրվագությունը, ինչպես նաև առանձին հանցատեսակների քննության գծով քննչական մարմինների աշխատակիցների փորձառության պակասը:

Նախաքննության ժամկետների ձգձգման հարցին անդրադարձ է եղել ՀՀ գլխավոր դատախազի մոտ 14.10.2016թ. տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ, և ՀՀ գլխավոր դատախազը ՀՀ դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարել է սեղմ ժամկետում քննարկել ժամկետները ձգձգված գործերը և այն քրեական գործերը, որոնցով ձեռք բերված տվյալները բավարար են, անմիջապես լուծել դրանց ընթացքը, իսկ այն քրեական գործերով, որոնցով հնարավոր չէ կայացնել վերջնական որոշում, քրեական գործը քննիչին վերադարձնել ցուցումով, որը պետք է լինի հստակ և առարկայական, որից հետո դրսևորել հետևողականություն՝ տրված ցուցումի՝ քննիչի կողմից պատշաճ կատարման նկատմամբ:

2016թ. ընթացքում դատախազների կողմից վարույթից հեռացվել է հետաքննություն և նախաքննություն իրականացնող 114 (2015թ. 86) անձ, որոնցից 5-ը (2015թ.՝ 16) վարույթից հեռացվել է հետաքննության և նախաքննության ժամկետները խախտելու, 13-ը՝ անձին կալանքի տակ պահելու ժամկետը խախտելու համար:

2016թ. ընթացքում արձանագրվել է նախաքննության և հետաքննության մարմինների աշխատակիցների կողմից թույլ տրված 187 (2015թ. 225) իրավախախտում, որոնցից 29-ը (2015թ.՝ 27) կապված է եղել հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման և ընթացքը լուծելու հետ, այդ թվում՝ 3-ը (2015թ.՝ 14)՝ նյութերով քրեական գործի հարուցումն անհիմն մերժելու, 2-ը (2015թ.՝ 1)՝ դեպքը չգրանցելու համար, 155-ը (2015թ.՝ 198)՝ հետաքննության և նախաքննության ընթացքի հետ, այդ թվում՝ 8-ը (2015թ.՝ 23)՝ հետաքննության և նախաքննության կատարման ժամկետները խախտելու համար:

2016թ. հետաքննություն և նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 140 (2015թ.՝ 146) միջնորդություն, որոնցից 20-ը (2015թ.՝ 13) կապված է եղել հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման և ընթացքը լուծելու հետ, 119-ը

(2015թ.՝ 133)՝ հետաքննության և նախաքննության ընթացքի հետ, 1-ը՝ այլ գործընթացներ իրականացնելու հետ:

Դատախազների կողմից ներկայացված միջնորդություններով անցկացված ծառայողական քննությունների արդյունքում հետաքննություն և նախաքննություն իրականացնող 68 (2015թ.՝ 70) անձ ենթարկվել է կարգապահական տույժի:

2016թ. քրեական գործերով և նյութերով պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններին դատախազների կողմից ներկայացվել է 74 հաղորդում-միջնորդություն:

Վերը ներկայացված ամփոփումներն իրականացվել են ինչպես վիճակագրական տվյալները, այնպես էլ դրանցից բխող օրինաչափությունները, իրավամեկնաբանության և իրավակիրառ ոլորտի մասնագիտական խնդիրներն ի հայտ բերելու և համապատասխան լուծումներ սահմանելու համար:

Ուսումնասիրությունները վեր են հանել իրավակիրառ պրակտիկայի առաջ ծառացած բազմաթիվ խնդիրներ, որոնք ավելի քան կես դար չկորցնելով արդիականությունն ու շարունակ դառնալով հետազոտությունների առարկա չեն ունեցել միասնական ընդունելություն և ընկալում, ինչի արդյունքում մի շարք քրեաիրավական նորմերի կիրառության պրակտիկան միասնական չի եղել: Դրանց շարքում կարելի է առանձնացնել մասնագիտական շրջանակներին քաջ հայտնի երկու կամ ավելի անձանց սպանության և դրա փորձի որակման, սպանության փորձի և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի սահմանազատման մասնագիտական խնդիրները:

Այդ և բազմաթիվ այլ կոնկրետ խնդիրներ, նախնական խորը տեսական վերլուծությունների արդյունքներով քննարկվելով ՀՀ դատախազության կոլեգիայում, ստացել են համապատասխան լուծումներ, որոնք սահմանված շատ հստակ չափանիշների ուժով ապահովելու են իրավակիրառ պրակտիկայի որոշակիությունն ու միասնականությունը:

Դատախազության ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվել քրեական գործերի քննության ընթացքում կիրառված դատավարական հարկադրանքի միջոցների, հատկապես խափանման միջոցների կիրառության պրակտիկան: Դրանց կիրառության օրինականության նկատմամբ հսկողությունը միաժամանակ ծառայում է երկու փոխկապակցված և հավասարակշռող նպատակների՝ գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության պայմանների ստեղծումն ու մարդու իրավունքների հավասարակշռված երաշխավորումը: Ընդ որում՝ ուշադրության կենտրոնում է պահվել ոչ միայն կալանավորման, այլև մյուս խափանման միջոցների կիրառության պրակտիկան: Դրա ուսումնասիրությունը վեր է հանել ինչպես քննության հանրային շահի, այնպես էլ մասնավոր իրավունքների չապահովման խնդիրներ:

Բանն այն է, որ տևական ժամանակ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառության պրակտիկան, սահմանափակվելով միայն կասկածյալից և մեղադրյալից ստորագրություն վերցնելով, չի օգտագործել «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.06.2006թ. որոշմամբ սահմանված այդ խափանման միջոցի կիրառման դեպքում համապատասխան տվյալները ՍԷԿՏ համակարգ ներմուծելու և այդպիսով խափանման միջոցի

գործողությունը երաշխավորելու հնարավորությունը: Արդյունքում խափանման միջոցի գործողության տակ գտնված անձանց ՀՀ տարածքը լքելու հնարավորությունը չի բացառվել: Կամ, անձի նկատմամբ կիրառված խափանման միջոցը վերացնելուց հետո, երբեմն նրա նկատմամբ առկա, նշված համակարգով սահմանված սահմանափակումը չի վերացվել՝ հանգեցնելով նրա ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակումների:

Ի հայտ բերված խնդիրները բացառելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազներին հանձնարարվել է պատշաճ հետևողականություն ցուցաբերել ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման և վերացման բոլոր դեպքերում համապատասխան տվյալները ՍԷԿՏ համակարգ ներմուծելու և հանելու ուղղությամբ՝ խափանման միջոցի պատշաճ գործողությունը երաշխավորելու և մարդու իրավունքների սահմանափակումները կտրականապես բացառելու համար:

Բացի այդ՝ նշված քննարկումները վեր են հանել նաև այնպիսի խնդիրներ, որոնք պայմանավորված են անհրաժեշտ իրավակարգավորումների բացակայությամբ, օրինակ՝ խափանման միջոց գրավի դեպքում ՍԷԿՏ համակարգով սահմանափակումները փաստացի կիրառելու հնարավորություն չնախատեսելու, կիրառված սահմանափակումները վերացնող սուբյեկտի և այլնի հետ կապված, որոնց ամբողջական քննարկումների արդյունքում կներկայացվեն համապատասխան առաջարկություններ:

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում ի հայտ են բերվել մի շարք այլ՝ իրավունքի նորմերի սխալ մեկնաբանության, կիրառման արատավոր պրակտիկայի հետ կապված (ինչպիսին քրեական գործ հարուցելը մերժելու կամ քրեական գործով վարույթը կարճելու (քրեական հետապնդում չիրականացնելու) որոշումների դեմ բերված բողոքներին օրենքով չնախատեսված ցանկացած այլ ձևով, այդ թվում՝ գրությամբ պատասխանելու, որոշումների բողոքարկման կարգը պատշաճ չպարզաբանելու) պրակտիկան է, որոնք ուղղակիորեն կապված են քրեական վարույթի մասնակիցների իրավունքների իրականացման հետ: Այդ խնդիրները բազմիցս քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայում և օպերատիվ խորհրդակցություններում և առաջ քաշված լուծումներն արդեն իսկ զգալիորեն շտկել են արձանագրված վիճակը:

Հայեցողական քրեական հետապնդման դատախազի բացառիկ լիազորության իրականացման հիմքերը և դատավարական հայեցողության շրջանակները հստակեցնելու, դրանք սահմանող իրավունքի նորմերի տարբերակված մեկնաբանություններն ու կիրառումը բացառելու նպատակով սահմանվել են գործուն զղջալու, տուժողի հետ հաշտվելու և իրադրության փոփոխման հիմքերով քրեական հետապնդում չիրականցնելու կամ այն դադարեցնելու լիազորության իրականացման չափանիշներ՝ մինչ օրս չնչին կիրառություն ունեցած նշված դատավարական հնարավորությունն ակտիվորեն գործադրելու, իսկ մյուս կողմից՝ պատշաճ վերահսկողության ներքո դրա կիրառման պրակտիկան միասնականացնելու համար:

Հայեցողական քրեական հետապնդման քրեաիրավական ինստիտուտը, որպես ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական վարույթ չիրականացնելու հնարավորություն, արտահայտում է այդպիսի

հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ պետական քրեական քաղաքականության մեղմացման մասին, որն իր կիրառման հստակ չափանիշների ուժով պետք է ապահովի այդ քաղաքականության նպատակների իրականացումը՝ առանց անձի դատապարտման և պատժի:

2) Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերի վերաբերյալ.

2016թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների կողմից կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի առթիվ նախապատրաստվել է 2247 նյութ (2015թ.՝ 2483), որոնցից 1361-ով (2015թ.՝ 1394) հարուցվել է քրեական գործ: Հիշյալ դեպքերի առթիվ նախապատրաստված նյութերի քանակը նախորդ տարվա համեմատ նվազել է 236-ով կամ 9.5%-ով, իսկ դրանցով հարուցված քրեական գործերի քանակը նախորդ տարվա համեմատ նվազել է 33-ով կամ 2.3%-ով:

Նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի թվի նվազումը պայմանավորված է, նախ, ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի ապաքրեականացմամբ, ինչի արդյունքում 2016թ. առաջին կիսամյակի ավարտին և 2-րդ կիսամյակի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների դեպքերի առթիվ նյութեր չեն նախապատրաստվել և քրեական գործեր չեն հարուցվել, ինչպես նաև այն հանգամանքով, որ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից, ՀՀ գլխավոր դատախազի 2016թ. հոկտեմբերի 14-ի հանձնարականի համաձայն, ուսումնասիրվել և ամփոփվել է ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով հարուցված և քննվող քրեական գործերի նախաքննության վիճակը, ինչի արդյունքում պարզվել է, որ եզակի չեն ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով քննվող այն քրեական գործերը, որոնք հարուցելու պահին նշված հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմի առկայության մասին վարույթն իրականացնող մարմնի կողմից բավարար տվյալներ ձեռք չեն բերվել, կասկածելի, այդ թվում՝ տնտեսապես ոչ շահավետ գործարքներ հայտնաբերելու նպատակով պարտապան ընկերությունների դեբիտորական և կրեդիտորական պարտքերի առաջացման հիմքերը չեն ուսումնասիրվել և վերլուծվել, չեն հայտնաբերվել պարտապանների կառավարման մարմինների կողմից կատարված այնպիսի կոնկրետ գործարքներ կամ գործողություններ, որոնք կարող էին ընկերություններում անվճարունակության հատկանիշների ստեղծման կամ դրանց չափի ավելացման պատճառ հանդիսանալ:

Քննարկվող քրեական գործերի հարուցման որոշումներում պարտապան ընկերությունների կողմից առաջացրած հարկային (կրեդիտորական) պարտավորությունները նշվել են որպես կատարված հանցագործության արդյունքում պետությանը պատճառված վնաս, մինչդեռ նյութերով ձեռք բերված փաստական տվյալներով այդ հագնամանքը որևէ կերպ հիմնավորված չի եղել:

Հիշյալ ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված միասնական մոտեցման համատեքստում քննարկելով յուրաքանչյուր քրեական գործի փաստական տվյալները՝ 2016թ. վերջին եռամսյակում կարճվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով քննվող 60 քրեական գործ, 75 քրեական

գործով նախաքննությունը շարունակվում է: Էականորեն նվազել են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով նախատեսված դեպքերով նախապատրաստվող նյութերը. եթե մինչև 2016թ. դեկտեմբեր ամիս նախապատրաստվել էր ամսական միջինը 10-12 նյութ, ապա դեկտեմբերի ամսին՝ ընդամենը 2 նյութ:

2016թ. ընթացքում հարուցված 731 (2015թ՝ 568) կոռուպցիոն բնույթի քրեական գործերից 55-ը (2015թ.՝ 40) վերաբերել է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված հափշտակություններին, 216-ը՝ (2015թ՝ 100) ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելուն, 50 քրեական գործ (2015թ՝ 33)՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածով նախատեսված՝ առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելուն, 98-ը (2015թ՝ 113)՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն, 35-ը (2015թ՝ 32)՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված՝ կաշառք ստանալուն, 6-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311^1-րդ հոդվածով նախատեսված՝ հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալուն (2015թ՝ 1), 64-ը (2015թ՝ 71-ը)՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված՝ պաշտոնեական կեղծիքին և այլն:

2016թ. ավարտվել է (կարճվել կամ մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել) կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված 1119 գործ (2015թ.՝ 814), 973 քրեական գործի վարույթ կարճվել է (2015թ.՝ 641), որոնցից 874-ը՝ արդարացման (2015թ՝ 561), 99-ը՝ ոչ արդարացման հիմքով (2015թ.՝ 80):

Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 146 քրեական գործ 271 անձի նկատմամբ, որոնցից 39-ը գտնվել է նախնական կալանքի տակ (2015թ.՝ 173 գործով 277 անձ, որոնցից 59-ը գտնվել է կալանքի տակ):

Ընթացք տրված 464 քրեական գործերով վարույթները կասեցվել են (2015թ.՝ 624), որոնցից 69-ով՝ անձի հետախուզման մեջ գտնվելու (2015թ՝ 76), 395-ը՝ այլ հիմքով:

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակահատվածից փոխանցված գործերի հետ անավարտ է մնացել ընդհանուր հաշվով 596 քրեական գործ (2015թ.՝ 856), որոնցով 18 անձ գտնվում է կալանքի տակ (2015թ.՝ 14):

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից 2016թ. դատավարական ղեկավարում է իրականացվել 804 (2015թ.՝ 574) քրեական գործի նկատմամբ, որոնցից ավարտվել է 456 (2015թ.՝ 121) քրեական գործ, ընդ որում՝ 208-ը վերջին եռամսյակում: Դրանցից 11 քրեական գործ 12 անձի նկատմամբ (2015թ.՝ 11 քրեական գործ՝ 13 անձի նկատմամբ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2016թ. ավարտված կոռուպցիոն բնույթի 707 քրեական գործից 593-ը կարճվել է, որոնցից 517-ը՝ արդարացման, իսկ 76-ը՝ ոչ արդարացման հիմքով, 114-ը 234 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, իսկ 88-ը կասեցվել է:

2016թ. 4-րդ եռամսյակում կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից էական աշխատանքներ են իրականացվել քրեական գործերի վերահսկողության բնագավառում,

մասնավորապես՝ կանոնակարգվել է մարզերի և վարչական շրջանների դատախազությունների հետ աշխատանքը:

Այդուհանդերձ, այդ բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքները դեռևս գոհացուցիչ չեն՝ մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների դատավարական ղեկավարման ներքո քննվող կոռուպցիոն բնույթի 119 քրեական գործից 60-ը քննվում է 6 ամիս և ավելի:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման հարցում դեռևս բավարար մակարդակի վրա չէ իրավապահ մարմինների համագործակցությունը և այն բարելավվելու կարիք ունի:

Այդ խնդրին միտված՝ հաշվետու տարում հրավիրվել են խորհրդակցություններ, ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ՝ կոռուպցիոն բնույթի երևույթների բացահայտման նպատակով խթանելու հասարակության ակտիվությունը, այդ բնագավառի աշխատանքները դարձնելու առավել թափանցիկ ու մատչելի:

Անհրաժեշտ է նկատել, որ ցանկացած և հատկապես կոռուպցիոն հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարը ենթադրում է համալիր միջոցառումների ամբողջություն, որն իր մեջ ներառում է ոչ միայն պայքարի իրավական միջոցների ակտիվացում կամ այլ որակական փոփոխություններ: Ամենալատենտայիններից մեկը համարվող կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նաև հասարակական կարծիքով և աջակցությամբ, հանցավորության դեմ պայքարի սուբյեկտների հետ վերջիններիս համագործակցությամբ, կոռուպցիոն գործարքների նկատմամբ անհանդուրժողականությամբ և այլն:

Կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունն ապահովելու համար, դրա առանձնահատկություններով պայմանավորված՝ սահմանվել են առանձին նյութական և դատավարական ինստիտուտների կիրառման սահմանափակումներ, որոնք արտահայտում են այդ պայքարի կոշտ բնույթն ու դրա արդյունքների կապակցությամբ ակնկալիքները: Մասնավորապես, նկատի ունենալով կոռուպցիոն հանցագործությունների հանրային վտանգավորության բարձր աստիճանը, դրանց քրեաիրավական և կիրմինոլոգիական այլ առանձնահատկությունները, որպես կանոն սահմանափակվել է հայեցողական քրեական հետապնդման և դատական քննության արագացված կարգի, որպես հանցանք կատարած անձանց համար բարենպաստ քրեաիրավական հետևանքներ առաջացնող ինստիտուտների կիրառումը:

Նկատի ունենալով, որ «Կոռուպցիոն հանցագործությունների մասին» ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. նոյեմբերի 19-ի թիվ 82 հրամանով ՀՀ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքներն որպես կոռուպցիոն առանձնացված էին առանց հստակ չափանիշների, ինչի արդյունքում կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը չէր համապատասխանում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին և չէր ապահովվում իրականում կոռուպցիոն հանցագործություններով պատշաճ վիճակագրության վարումը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամանով սահմանվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված արարքները կոռուպցիոն հանցագործություններ համարելու չափանիշները, իսկ հրամանի հավելվածով հաստատվել է կոռուպցիոն հանցագործությունների նոր ցանկը:

Նշված հրամանի համաձայն՝ կոռուպցիոն հանցագործություններ են համարվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված այն արարքները, որոնք համապատասխանում են հետևյալ չափանիշներին՝

1) հանցավոր արարքը հատուկ սուբյեկտի՝ պաշտոնատար անձի, կամ առևտրային կամ այլ կազմակերպությունում կարգադրիչ կամ այլ կառավարչական գործառույթներ իրականացնող կամ առևտրային կազմակերպություններում այլ պաշտոն զբաղեցնող անձի կողմից կատարված լինելը,

2) հանցավոր արարքը՝ ծառայողական դիրքի ընձեռած հնարավորություններն օգտագործելով կատարած լինելը,

3) հանցավոր արարքը՝ ոչ իրավաչափ առավելություն ստանալու նպատակով՝ շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով կատարված լինելը,

4) այն հանցավոր արարքները, որոնք թեև չեն համապատասխանում վերը նշված չափանիշներին, բայց Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով համարվում են կոռուպցիոն հանցագործություններ:

Ակտիվացել են շփումները կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում լիազորություններ իրականացնող պետական մարմինների հետ, ինչը ևս տվել է դրական արդյունք: Մասնավորապես, 2016թ. ընթացքում պահանջվել և ուսումնասիրվել են ՀՀ վերահսկիչ պալատի 2014-2016թթ. ընթացիկ բոլոր հաշվետվությունները՝ թվով 63: Դրանց ուսումնասիրության արդյունքներով հայտնաբերված խախտումների կապակցությամբ հարուցվել է 7 քրեական գործ:

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի՝ 2016թ. միջոցառումների ծրագրի 52-րդ կետով նախատեսված միջոցառման շրջանակներում, կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու, Հայաստանի Հանրապետության դատախազության և Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունների միջև կապերի հաստատման ու ամրապնդման, համագործակցության խորացման և կատարելագործման, հանրության արտահայտած կարծիքների ու առաջարկությունների դիտարկման, ամփոփման ու վերլուծման և դատախազությանը վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում դրանց հնարավոր կիրառման նպատակներով, ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2016թ. հոկտեմբերի 13-ին նախաձեռնվել է հանդիպում ՀՀ-ում գրանցված թվով 16 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացում արձանագրվել է, որ Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունն իրականացվելու է՝ նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարում ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի ու իրավունքների պաշտպանությանը, օրենսդրության՝ կոռուպցիոն ռիսկեր պարունակող ընթացակարգային և համակարգային փոփոխությունների կատարմանը, բարձրացնել բնակչության՝ կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտության և այդ պայքարի միջոցների վերաբերյալ իրազեկության մակարդակը:

Հանդիպման ընթացքում կարևորվել է ՀՀ հասարակական կազմակերպությունների դերը՝ որպես կոռուպցիայի հաղթահարման ոլորտում տեղեկության ձեռքբերման, տիրապետման, տրամադրման, փոխանակման և հրապարակման, ինչպես նաև կոռուպցիայից տուժած քաղաքացիների շահերի ներկայացման և պաշտպանության լրացուցիչ միջոց:

3) ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերի վերաբերյալ.

2016թ. ընթացքում ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության կողմից հսկողություն է իրականացվել 284 (2015թ.՝ 236) նյութի նախապատրաստման նկատմամբ, ստուգվել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին 30 (2015թ.՝ 10) որոշման օրինականությունը, նշված որոշումներից 5-ը վերացվել է և հարուցվել են քրեական գործեր, հսկողություն է իրականացվել 547 (2015թ.՝ 497) քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ, որոնցից 387 (2015թ.՝ 371) գործ քննվել է ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում, 98-ը (2015թ.՝ 98)՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում, 59-ը (2015թ.՝ 28)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի քննչական վարչություններում և 3-ը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում: Նշված գործերից 110-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 38-ը կարճվել է, 152-ը կասեցվել է, 61-ն ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 27-ը միացվել է այլ գործերի, 159-ի նախաքննությունը չի ավարտվել:

ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում 2017թ. հունվարի 1-ի դրությամբ անավարտ քրեական գործերի թիվը կազմել է 110-ը (2015թ.՝ 139):

2016թ. նախաքննության նշված մարմնի քննիչների կողմից վարույթ է ընդունվել 248 (2015թ.՝ 213) քրեական գործ, նույն ժամանակահատվածում հարուցվել է 187 (2015թ.՝ 190) քրեական գործ, այլ մարմիններից ստացվել է 39 (2015թ.՝ 43) քրեական գործ, վերսկսվել է նախկինում վարույթը կասեցված կամ կարճված **22** (2015թ.՝ 13) քրեական գործ:

2016թ. ընթացքում ավարտվել է 118 (2015թ.՝ 106) քրեական գործի նախաքննություն, որոնցից 85-ը (2015թ.՝ 93) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 33-ը (2015թ.՝ 12) կարճվել է, 71-ը (2015թ.՝ 66) կասեցվել է, 61-ն (2015թ.՝ 31) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 27-ը (2015թ.՝ 29) միացվել է այլ գործերի:

2016թ. ընթացքում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացման) վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում քննվել է 15 քրեական գործ: Նշված գործերից 6-ը հարուցվել է 2016թ, իսկ 9-ը փոխանցվել է 2015թ.-ից: Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու վերաբերյալ 2016թ. ընթացքում քննված 16 քրեական գործից 4-ի վարույթը կասեցվել է, որոնցից 2-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով: 1 անձի նկատմամբ 1 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 1 քրեական

գործով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված հիմքով, իսկ 8 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում 2016թ. ընթացքում նախապատրաստվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ 39 (2015թ.՝ 12) նյութ, որոնցով հարուցվել է 39 (2015թ.՝ 12) քրեական գործ:

2016թ. ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության վարույթ է ընդունվել կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ 40 (2015թ.՝ 13) քրեական գործ:

7 գործ 15 անձի նկատմամբ (2015թ՝ 3 գործ՝ 9 անձ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Դատարանում քննված և ավարտված գործերով հանցագործությամբ պետությանը պատճառված գույքային վնասի չափը կազմել է 783.586.000 ՀՀ դրամ, որն ամբողջությամբ վերականգնվել է:

4) **Հատկապես կարևոր գործերով քննության վերաբերյալ.**

ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության կողմից 2016թ. հսկողություն է իրականացվել 613 (2015թ.՝ 598) նյութի նախապատրաստման նկատմամբ, այդ թվում՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 75, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 135, ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 103, կոռուպցիոն հանցագործություններով՝ 297, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններով՝ 3: 387 նյութերով հարուցվել են քրեական գործեր:

Ստուգվել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 140 որոշման օրինականություն, որոնցից 6-ը վերացվել է և հարուցվել են քրեական գործեր:

2016թ. դատավարական ղեկավարում է իրականացվել 1008 (2015թ.՝ 1011) քրեական գործի նախաքննության նկատմամբ, այդ թվում մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 184, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 194, ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 204, կոռուպցիոն հանցագործություններով՝ 411, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններով՝ 15:

Ավարտվել է 564 (2015թ.՝ 471) քրեական գործի նախաքննությունը, այդ թվում՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 97, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 78, ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 122, կոռուպցիոն հանցագործություններով՝ 262, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններով՝ 5:

Ստուգվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին 407 (2015թ.՝ 345) և վարույթը կասեցնելու մասին 98 որոշման օրինականությունը:

2016թ. նախորդ տարվա համեմատությամբ նվազել են քրեական գործի վարույթը կարճելու որոշումները վերացնելու (33-80), քրեական գործի վարույթը կասեցնելու որոշումները վերացնելու (5-8), լրացուցիչ քննություն կատարելու համար գործերը քննիչին վերադարձնելու (4-16), ցուցումներ տալու (50-54) դեպքերը:

Միաժամանակ զգալիորեն նվազել է դատախազների դատավարական ղեկավարման տակ գտնվող քրեական գործերի քանակը: Այսպես. 2017թ. հունվարի 1-ի դրությամբ անավարտ քրեական գործերի թիվը կազմել է **160** (2015թ.՝ **274**):

2016թ. 158 քրեական գործ՝ 275 անձի նկատմամբ (2015թ.՝ 122 գործ 192 անձի նկատմամբ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2016թ. ընթացքում դատի է տրվել ՀՀ ԿԱ ոստիկանության 36 աշխատակից, դատախազության 1 նախկին ավագ քննիչ, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության 9 աշխատակից, ՀՀ ԿԱ ՊԵԿ 6 տեսուչ, 1 դատավոր, ՀՀ քննչական կոմիտեի 3 քննիչ, ՀՀ ԱՆ ՔԿՎ 1 հետաքննիչ, 7 մասնագետ, ՀՀ ԱԻՆ 2 աշխատակից, ՀՀ ԱԱԾ 1 աշխատակից:

2016թ. ՀՀ ԿԱ ոստիկանության 7 աշխատակցի և ԱԱԾ 1 աշխատակցի վերաբերյալ քննված քրեական գործերի վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի հիմքով:

Դատարանների կողմից կայացված 4 որոշումով պարտավորեցվել է վարույթը կարճված գործերով վերացնել անձանց խախտված իրավունքները: Նշված որոշումների դեմ դատախազների կողմից բերվել է 2 վերաքննիչ բողոք, որոնցից մեկը բավարարվել է, մյուսի քննարկումը ընթացքի մեջ է:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ 2016թ. ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության կողմից ուսումնասիրվել և ամփոփվել է 2014-2015թթ. ընթացքում ազատությունից զրկված անձանց նկատմամբ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև բռնություն գործադրելու այլ դեպքերի առթիվ քննված քրեական գործերով նախաքննության վիճակը:

Ուսումնասիրության ընթացքում կազմակերպվել են քննարկումներ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ուսումնասիրության արդյունքները քննարկվելու են ՀՀ դատախազության կոլեգիայի առաջիկա նիստում:

3. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ

2016թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 2517 գործ՝ 3092 անձի վերաբերյալ (2015թ.՝ 2492 գործ՝ 3142 անձի վերաբերյալ, 2014թ.՝ 2523 գործ՝ 3010 անձի վերաբերյալ):

Դատարաններում քննվել և ավարտվել է 2150 քրեական գործ՝ 2615 անձի նկատմամբ (2015թ. ընթացքում քննվել է 2174 քրեական գործ՝ 2678 անձի նկատմամբ, 2014թ. ընթացքում 1990 քրեական գործ՝ 2461 անձի նկատմամբ): Նշված քրեական գործերից 1804-ով դատապարտվել է 2204 անձ (2015թ. ընթացքում 1831 գործով դատապարտվել է 2256 անձ):

45 քրեական գործով 45 անձի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464-րդ հոդվածի կարգով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց (2015թ. 49 քրեական գործով՝ 52 անձի նկատմամբ, 2014թ. 47 քրեական գործով՝ 47 անձի նկատմամբ):

2016թ. դատարաններում քննված 2150 գործից՝ 69-ով (3.2%) մեղադրվող 2615 անձից 90-ը կամ 3.4%-ն արդարացվել է (2015թ. 60 գործով կամ 2.4%-ով 77 անձ կամ անձանց 2.4%-ն արդարացվել է, 2014թ. 46 քրեական գործով արդարացվել է 59 անձ): 2016 թվականի ընթացքում արդարացված անձանց թիվը 2015 թվականի արդարացված անձանց թվի համեմատությամբ աճել է շուրջ 16.9%-ով:

2016թ. 210 քրեական գործ՝ 248 անձի վերաբերյալ կարճվել է (2015թ.՝ 221 քրեական գործ՝ 279 անձի նկատմամբ), որոնցից 3-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով, 208-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 1-ը՝ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված 1-ին մասի 13-րդ կետով, 3-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով, 21-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 12-ը՝ այլ հիմքով:

Դատապարտված անձանցից 77-ը եղել են անչափահասներ (2015թ.՝ 82 անձ, 2014թ.՝ 91 անձ), 204-ը՝ կին (2015թ.՝ 211 կին, 2014թ.՝ 165 կին), 271-ը՝ նախկինում դատված (2015թ.՝ 295 անձ, 2014թ.՝ 343 անձ), 12-ը՝ օտարերկրացի (2015թ.՝ 16 անձ): 22 գործով 28 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ (2015թ.՝ 13 գործ՝ 14 անչափահաս):

2016թ. դատապարտված անչափահասների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 6.0%-ով, 2016թ. իսկ դատապարտված կանանց թիվը նվազել է 3.3%-ով, նախկինում հանցանք կատարած անձանց թիվը՝ 8.1%-ով:

2016թ. դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասն ընդհանուր առմամբ կազմել է 1.236.845.459 ՀՀ դրամ, որից 138.040.702 ՀՀ դրամը՝ պետությանը պատճառված, 366.492.231 ՀՀ դրամը՝ իրավաբանական անձանց, 732.312.526 ՀՀ դրամը՝ ֆիզիկական անձանց պատճառված վնաս (2015թ. 1.176.748.690 ՀՀ դրամ):

Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է ընդամենը 359.498.095 ՀՀ դրամ, որից 21.932.794 ՀՀ դրամը՝ պետությանը, 72.064.938 ՀՀ դրամը՝ իրավաբանական անձանց և 265.500.363 ՀՀ դրամը՝ ֆիզիկական անձանց պատճառված վնասներից:

2016թ. դատարաններում քննված և ավարտված՝ 2615 անձի վերաբերյալ 2150 քրեական գործից 826-ը (38.4%) եղել է ոչ մեծ ծանրության՝ 922 անձի նկատմամբ (35.2%), 861-ը՝ միջին ծանրության (40%)՝ 1089 անձի նկատմամբ (41.6), 430-ը՝ ծանր (20%)՝ 567 անձի նկատմամբ (21.6) և 33-ը՝ առանձնապես ծանր (1.5%)՝ 37 անձի նկատմամբ (1.4%): 2015 թվականի ընթացքում դատարաններում քննված և ավարտված 2174 քրեական գործից 832-ը եղել է ոչ մեծ ծանրության (38.2%)՝ 989 անձի նկատմամբ (45.4%), 861-ը՝ միջին ծանրության (39.6)՝ 1176 անձի նկատմամբ (49.6%), 444-ը՝ ծանր (20.4%)՝ 569 անձի նկատմամբ (26.1%) և 37-ը՝ առանձնապես ծանր (1.7%)՝ 41 անձի նկատմամբ (1.8%):

2016թ. ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նախորդ տարվա համամատ նվազել է 6.7%-ով, միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտվածներինը՝ 7.3%-ով, ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը՝ 3.1%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը՝ 9.7%-ով:

Դատապարտված 2204 անձից 809-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 36.7%-ը: (2015թ. 2256 անձից ազատազրկման է դատապարտվել 851-ը (37.7%), 2014թ. 2154 անձից ազատազրկման է դատապարտվել 1110-ը (51.5%):

Ինչպես 2015 թվականին, այնպես էլ 2016 թվականին ցմահ ազատազրկման որևէ անձ չի դատապարտվել:

Ընդհանուր դատապարտվածների մեջ կալանքի է դատապարտվել 57 անձ (2015թ.՝ 73 անձ): Այսինքն՝ կալանքի դատապարտված անձանց քանակը ընդհանուր դատապարտված անձանց մեջ կազմում է 2.5 %:

Տուգանքի է դատապարտվել 771 անձ (2015թ.՝ 760 անձ): Այսինքն՝ տուգանքի դատապարտված անձանց քանակը ընդհանուր դատապարտված անձանց մեջ կազմում է 34.9 %:

567 անձի նկատմամբ, որը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 25.7%-ը, նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել (2015թ. կիրառվել է 570 անձի նկատմամբ, 2014թ.՝ 415 անձի նկատմամբ):

2016թ. դատարանների կողմից ազատազրկման հետ չկապված պատիժների է դատապարտվել նախնական կալանքի տակ գտնվող 40 անձ (2015թ.՝ 47 անձ), որոնք ազատ են արձակվել դատական նիստերի դահլիճից:

Դատարանների կողմից նախնական կալանքի տակ չգտնվող 325 անձ դատապարտվել է ազատազրկման (2015թ.՝ 305 անձ):

Դատարանները 6 անձի նկատմամբ պատիժ նշանակելիս կիրառել են ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը (2015թ.՝ 4 անձի նկատմամբ):

2016թ. դատարաններում քննված քրեական գործերից 865 գործով 1005 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ, որը կազմում է քննված գործերի 40.2%-ը (2015թ. Ընթացքում՝ 585 գործով, որը կազմում է քննված գործերի 32%-ը):

2016թ. ավարտված՝ 2615 անձի վերաբերյալ 2150 քրեական գործից 12 անձի վերաբերյալ 12 գործով մեղադրողները դատարանում հրաժարվել են մեղադրանքից, և

այդ հիմքով դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ, որը կազմում է մեղադրվող անձանց 0.4%-ը: 2015 թվականի ընթացքում ավարտված 2174 գործից՝ 2678 անձանց վերաբերյալ մեղադրանքից հրաժարվելու հիմքով 8 քրեական գործով արդարացվել է 8 անձ, որը կազմում է մեղադրվող անձանց 0.2%-ը: Այսինքն՝ մեղադրողների կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքերը հաշվետու տարում աճել են 4 գործով 4 անձի նկատմամբ կամ 33.3%-ով:

Մեղադրանքից հրաժարման դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց զգալի մասը պայմանավորված է դատարանում ապացույցների հետազոտման արդյունքներով, որոնք մեղադրողի մոտ վերջնական դատավարական դիրքորոշում են ձևավորում մեղադրանքն անհիմն, տվյալ դեպքում՝ դրա փաստական կողմն ապացուցված չլինելու մասին:

2016թ. դատական քննության ընթացքում 8 գործով 8 անձի (2015թ.՝ 19 գործ 23 անձ) նկատմամբ մեղադրողները որոշում են կայացրել մեղմացման առումով առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին, իսկ խստացման առումով՝ 2 գործով 8 անձի նկատմամբ (2015թ.՝ 2 գործ 2 անձ):

Դատարանում մեղադրանքի փոփոխությունները հիմնականում պայմանավորված են եղել դատաքննությամբ նախկինում անհայտ հանգամանքներ ի հայտ գալով կամ նախկինում հայտնի, բայց բավարար ապացուցողական չափանիշով չհաստատված հանգամանքներն ապացուցվելով:

2016թ. 54 անձի առաջադրված մեղադրանքները դատարանների կողմից վերաորակվել են: Արարքի վերաորակման դեպքերի մեծամասնությունը պայմանավորված է եղել ապացույցների դատական գնահատմամբ, այն է՝ դատարանները գործով ձեռք բերված ապացույցները բավարար չեն համարել մեղադրանքի փաստական նկարագրության որևէ մասը հաստատված համարելու համար:

2016թ. 69 քրեական գործով արդարացվել է 90 անձ, որը կազմում է մեղադրվող անձանց թվի 3.4%-ը: Նշված անձանցից 31-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 32-ը՝ միջին ծանրության, 24-ը՝ ծանր և 3-ը՝ առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու համար (2015թ. ընթացքում 60 գործով արդարացվել է 77 անձ, որը կազմել է մեղադրվող անձանց 2.9%-ը): 2016թ. 38 գործով 43 անձ արդարացվել է մասնակի:

2016թ. արդարացման դատական ակտերի դեմ մեղադրողների կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան է ներկայացվել 64 վերաքննիչ բողոք, որոնցից 22-ը մերժվել է, 14-ը՝ բավարարվել է, իսկ 28-ը ընթացքի մեջ է:

Արդարացման դատական ակտերի դեմ բերվել է 27 վճռաբեկ բողոք, որոնցից 19-ով որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին, 6-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 2-ով որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին, որից մեկը բավարարվել է, մյուսը՝ ընթացքի մեջ է:

Արդարացման յուրաքանչյուր դատավճիռ քննարկվել է ՀՀ գլխավոր դատախազությունում՝ դրա պատճառները վեր հանելու, փաստարկների հիմնավորվածությունը և հետագա բողոքարկման հնարավորությունները գնահատելու համար: Բացի կոնկրետ գործերով դատական ակտերի քննարկումներից և դրանով անհրաժեշտ դատավարական գործողությունները պլանավորելուց, ՀՀ դատախազությունում 2016թ. տարեվերջին քննարկվել և այսուհետ քննարկվելու են տարվա ընթացքում կայացված արդարացման դատավճիռները՝ դրանցում

արտահայտված նյութական և դատավարական իրավունքի նորմերի մեկնաբանության և կիրառության խնդիրներն ամփոփելու և թույլ տրված խատումները բացառելուն ուղղված անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու նպատակով:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շարունակում են մտահոգիչ լինել առանձին հանցակազմերի, այդ թվում՝ խուլիգանությունների, խարդախությունների, ինքնիրավչությունների, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու, ճանապարհատրանսպորտային հանցագործությունների, տեխնիկայի անվտանգության կանոնների խախտումների, զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հատկանիշների մեկնաբանության խնդիրները: Այդ խնդիրների բազմակողմանի, այդ թվում՝ տեսական ուսումնասիրությունների հիման վրա ՀՀ դատախազության կոլեգիան սահմանել է դրանց մեկնաբանության հստակ մոտեցումներ այդ թվում՝ հանցագործությունների գնահատողական հատկանիշների(էական վնաս, ծանր հետևանք) մեկնաբանության կապակցությամբ այն հաշվով, որպեսզի դրանց տարակերպ կիրառությունները բացառվեն:

Արդարացման դատավճիռների համապարփակ ու խորը ամփոփումն իր մեջ ներառել է նաև քրեական դատավարության օրենսգրքի նորմերի կիրառության և անմիջապես վարույթի մասնակիցների դատավարական իրավունքների սահմանափակումներին առնչվող խնդիրներ, ինչպիսիք են բնակարանի անձեռնմխելիության, պաշտպանության սահմանադրական իրավունքների խախտումները, քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելիս թույլ տրված դատավարական իրավունքի խախտումները, որոնք հագեցրել են ընդհուպ մինչև ապացույցների անթույլատրելիության:

Քննարկման արդյունքում կոլեգիան սահմանել է վարույթն իրականացնող մարմինների կողմից իրենց դատավարական լիազորությունների իրականացնելիս պահպանման ենթակա այնպիսի հանձնարարականներ, որոնք չսահմանափակելով քննության հնարավորություններն ու համապատասխան պաշտոնատար անձանց՝ հանցավորության դեմ պայքարի ոլորտում լիազորությունները, պետք է բացառեն մարդու իրավունքների խախտումները: Ուսումնասիրությունների արդյունքում սահմանվել են նաև հանձնարարականներ՝ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության գործառույթի արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ: Ամփոփման արդյունքներով մշակվել են անհրաժեշտ մեխանիզմներ՝ յուրաքանչյուր արդարացման դատավճռով արձանագրված խախտումները բոլոր ստորաբաժանումներում քննարկելու, համապատասխան հետևություններ կատարելու և արձանագրված խախտումները բացառելու նպատակով: Խիստ մոտեցումներ են սահմանվել իրավունքի կոպիտ խախտումներ հայտնաբերելու դեպքերի կապակցությամբ՝ պարտավորեցնելով այդպիսիք դարձնել համապատասխան ծառայողական ուսումնասիրությունների առարկա:

Դատական պրակտիկայի և հատկապես արդարացման դատավճիռների ուսումնասիրությունների արդյունքները ծառայեցվելու են նաև իրավունքի զարգացման նպատակին: Կարևորելով իրավակիրառ պրակտիկայի փորձառական նշանակությունն ու ներուժը՝ առկա խնդիրները լուծելու մեխանիզմներ առաջ քաշելու տեսանկյունից, ՀՀ դատախազությունն ակտիվ աշխատանքային համագործակցություն է նախաձեռնում օրենսդրական գործընթացի բոլոր մակարդակներում: Ի հայտ բերված բազմաթիվ օրենսդրական բացեր լրացնելու նպատակով արդեն իսկ ներկայացվել են

համապատասխան օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ, ակտիվ աշխատանքային շփում է նախաձեռնվել ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի հետ, որին շարունակաբար ներկայացվելու են գործող օրենսգրքում առկա գործնական խնդիրները, օրենդրական բացերն ու թերկարգավորումները՝ նոր օրենսգրքում դրան բացառելու նպատակով:

2016 թվականի ընթացքում դատարանների կողմից 210 քրեական գործի՝ 248 անձի վերաբերյալ վարույթը կարճվել է (2015թ.՝ 221 քրեական գործ՝ 279 անձի նկատմամբ), որոնցից 3-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով, 208 գործ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված 1-ին մասի 5-րդ կետով, 1-ը՝ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված 1-ին մասի 13-րդ կետով, 3-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով, 21-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 12-ը՝ այլ հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում ամբաստանյալի կողմից դատական քննությունից խուսափելու հիմքով քրեական գործի վարույթը կասեցնելու որոշումներ չեն կայացվել (2015թ.՝ 4 գործ 4 անձ):

2016թ. քննված քրեական գործերով 567 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և պատիժը պայմանականորեն չի կիրառվել, որը կազմում է դատապարտված անձանց 25.7%-ը: (2015թ.՝ 570 անձ, որը կազմում է դատապարտված անձանց 25,3%-ը, 2014թ.՝ 415 անձ, որը կազմում է դատապարտված անձանց 19,3 տոկոսը): Դատապարտված անձանցից, որոնց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 110-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 260-ը՝ միջին ծանրության, 197-ը՝ ծանր հանցագործության կատարման մեջ:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտված 567 անձի 327 ամբաստանյալի (57.6%) նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել մեղադրողների միջնորդության հիման վրա (2015թ.՝ 570 անձից 267-ի նկատմամբ (46.8%):

Դատարանների նախաձեռնությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման դեմ մեղադրողների կողմից 143 ամբաստանյալի նկատմամբ բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնցից 90-ը մերժվել է, 18-ը բավարարվել է, 35 բողոքի քննությունն ընթացքի մեջ է:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի անթույլատրելիության պահանջով բերվել է 17 վճռաբեկ բողոք, որոնցից 8-ով որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին, 5-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 4-ով որոշում է կայացվել բողոքը վարույթ ընդունելու մասին, որոնցից 2-ը բավարարվել է, 2-ը ընթացքի մեջ է:

Հաշվետու ժամանակահատվածում 6 անձի նկատմամբ պատիժ նշանակելիս կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը, որը կազմում է ընդհանուր դատապարտվածների 0,2%-ը: (2015թ.՝ 4 անձ, որը կազմել է ընդհանուր դատապարտված անձանց 0,1%-ը):

Պատիժ նշանակելիս 4 անձի նկատմամբ դատարանները ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կիրառել են սեփական նախաձեռնությամբ, 2 անձի նկատմամբ՝ մեղադրողի միջնորդությամբ: Երեք գործով 2 անձի վերաբերյալ մեղադրողների կողմից բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնք մերժվել են:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի անթույլատրելիության պահանջով բերվել է 2 վճռաբեկ բողոք, որոնք ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վարույթ չեն ընդունվել:

Կարևորելով կոնկրետ հանցատեսակների դեմ պայքարի քրեական, այդ թվում՝ պատժողական քաղաքականության որոշակիության և միասնականության ապահովումը՝ ՀՀ դատախազությունը փուլ առ փուլ ամփոփում է մինչ օրս այդ քաղաքականության դրսևորումները որոշակի ժամանակահատվածի համար, դրանք դիտարկում կոնկրետ հանցատեսակի շարժընթացի, կրկնահանցագործությունների վերաբերյալ և պատժողական քաղաքականության համար որոշիչ այլ տվյալների համատեքստում՝ որդեգրված մոտեցումների արդյունավետությունը գնահատելու և անհրաժեշտության դեպքում՝ դրանք վերափոխելու նպատակով: Պատժողական քաղաքականության միասնականության և որաշակիության ապահովումը քրեաիրավական հարաբերությունների մասնավոր մասնակիցների իրավունքներների ու ազատությունների պաշտպանության երաշխիք հանդիսանալուց բացի, նաև սահմանափակում է պատժի արդարացիության գնահատականի բացարձակ հայեցողականությունը՝ դրա բոլոր անբարենպաստ հետևանքներով:

2016 թվականի ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 334 վերաքննիչ բողոք, որոնցից 5-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 70-ը կամ 20.9%-ը եղել են արդարացման և կարճման, 203-ը կամ 60.7%-ը՝ պատժի մեղմության, 1-ը կամ 0.2%-ը՝ պատժի խստության դեմ, 27-ը կամ 8%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 32-ը կամ 9.5%-ը՝ այլ հիմքով, 1-ը կամ 0.2%-ը՝ քաղաքացիական հայցի մասով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 74-ը կամ 22.1%-ը բավարարվել է, 144-ը կամ 43.1%-ը՝ մերժվել է, 3-ով կամ 0.8%-ով կայացվել է այլ որոշում, 108-ով կամ 32.3%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2015 թվականի ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 286 վերաքննիչ բողոք, որոնցից 1-ը հետ է վերցվել, 2-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 60-ը կամ 20,9%-ը եղել են արդարացման, 172-ը կամ 60,1%-ը՝ պատժի մեղմության, 3-ը կամ 1,04%-ը՝ պատժի խստության դեմ, 18-ը կամ 6,2%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 32-ը կամ 11,1%-ը՝ այլ հիմքով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 51-ը կամ 17,8%-ը բավարարվել է, 170-ը կամ 59,4%-ը՝ մերժվել է, 2-ով կամ 0,7%-ով կայացվել է այլ որոշում, 60-ով կամ 21%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից դատավճիռների դեմ բերվել է 384 վերաքննիչ բողոք, որոնցից 4-ը կամ 0.1%-ը հետ է վերցվել, 5-ով կամ 1.3%-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 6-ը կամ 1.5%-ը եղել են արդարացման, 13-ը կամ 3.3%-ը՝ պատժի մեղմության դեմ, 291-ը կամ շուրջ 75.7%-ը պատժի խստության դեմ, 5-ը կամ 1.3%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 60-ը կամ 15.6%-ը՝ այլ հիմքով, 4-ը կամ 0.1%-ը՝ քաղաքացիական հայցի մասով:

Հիշյալ բողոքներից բավարարվել է 51-ը կամ 13.2%-ը, 217-ը կամ շուրջ 56.5%-ը մերժվել է, 7-ով կամ 1.8%-ով կայացվել է այլ որոշում, 99-ով կամ շուրջ 25.7%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2016 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից դատական ակտերի դեմ բերվել է 74 վճռաբեկ բողոք: Ներկայացված բողոքներից 19-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 44-ով որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին: Ներկայացված բողոքներից 11-ն ընդունվել է վարույթ, որոնցից 5-ը բավարարվել է (2015թ. բերված բողոքներից 3-ը բավարարվել է 2016թ.), 6-ի քննությունն ընթացքի մեջ է: Բերված բողոքներից 27-ը կամ 36.4%-ը եղել են արդարացման, 25-ը կամ 33.7%-ը՝ պատժի մեղմության դեմ, 1-ը կամ 1.3%-ը՝ պատժի խստության դեմ, 13-ը կամ 17.5%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 8-ը կամ 10.8%-ը՝ այլ հիմքով:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից դատավճիռների և որոշումների դեմ բերվել է 93 վճռաբեկ բողոք, որոնցից 1-ը հետ է վերցվել, 22-ը կամ 23.6%-ը վերադարձվել է դատարանի կողմից, 35-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 2-ը կամ 2.1%-ը ներկայացվել են արդարացման, 4-ը կամ 4.3%-ը՝ պատժի մեղմության դեմ, 43-ը կամ շուրջ 46.2%-ը՝ պատժի խստության դեմ, 1-ը կամ 1%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 20-ը կամ 21.5%-ը՝ այլ հիմքով:

Հիշյալ բողոքներից բավարարվել է 5-ը կամ 5.3%-ը, 17-ը կամ շուրջ 18.2%-ը մերժվել է, 1-ով կամ 1%-ով կայացվել է այլ որոշում, 12-ով կամ 12.9%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

ՀՀ դատախազությունը նկատի ունենալով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթն ու այդ համատեքստում իրավունքի զարգացումն ապահովելու հրամայականը, տեսանելի շեշտադրում ունի այն գործերով վճռաբեկ բողոքների վրա, որոնցում կարող են բարձրացվել իրավունքի զարգացման, նյութական կամ դատավարական իրավունքի կամ դրանց փոխկապակցված իրավունքի այլ ճյուղերի նորմերի մեկնաբանության խնդիրներ: Դատախազության բողոքներով մինչ օրս մեկնաբանություն են ստացել գործնականում տևական ժամանակ հիմնախնդրային համարված հարցեր, ինչպիսիք են խարդախության և խաբեությամբ գույքային վնաս պատճառելու, հանցագործությունների համակցության և շարունակվող հացնագործությունների սահմանազտման խնդիրները, հիմնարար խախտում քրեադատավարական եզրույթը և այլն:

Իրավական զարգացման և կատարելագործման տեսանկյունից կարևորելով նաև սահմանադրական արդարադատության նշանակությունը իրացվել և այսուհետ հետևողականորեն իրացվելու է նաև դատախազության վարույթում գտնվող գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու ՀՀ գլխավոր դատախազի լիազորությունը:

Նկատի ունենալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի դրույթների անկատարությամբ պայմանավորված՝ դրա տարակերպ և առանձին դեպքերում ՀՀ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակին անհամապատասխան մեկնաբանությունները, ՀՀ գլխավոր դատախազի դիմումով ՀՀ սահմանադրական դատարանում վիճարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 18, 19, 20 և 103-րդ հոդվածներին համապատասխանությունը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված այն մեկնաբանությամբ, որ ՀՀ գլխավոր դատախազն իրավասու չէ վեցամսյա ժամկետում վերացնելու հետաքննության մարմնի կամ քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը: ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ.

նոյեմբերի 1-ի ՍԴՈ-1319 որոշմամբ սահմանադրական գործի վարույթը կարճվել է՝ որոշման եզրափակիչ մասում բացահայտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի սահմանադրաիրվական բովանդակությունը, որն ամբողջությամբ համապատասխանել է ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիմնավորումներին:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացված ՀՀ գլխավոր դատախազի դիմումով վիճարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.1-րդ մասի 2.2-րդ կետի 2-րդ ենթակետի, 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 69-րդ հոդվածներին, ինչպես նաև 93-րդ և 103-րդ (2005 թվականի խմբագրությամբ) հոդվածներին համապատասխանությունն այնքանով, որքանով դրանք հնարավորություն չեն տալիս նոր հանգամանքի հիմքով վերանայել դատական ակտերն, ինչպես նաև նույն հիմքով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով (բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունել այն դեպքում, երբ այդ գործով կիրառված նորմը Սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասից բացի այլ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը, Սահմանադրական դատարանը գտել է, որ տվյալ նորմը կիրառվել է այլ մեկնաբանությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով դրանցով նախատեսված դատավարական հետևանքները կապում են ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման բացառապես եզրափակիչ մասում արտահայտված՝ կոնկրետ նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումների հետ:

Դիմումով փաստարկվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերը դատավարական հետևանքներ նախատեսելով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման բացառապես եզրափակիչ մասում արտահայտված իրավական դիրքորոշումների հետ, չեն բխում ՀՀ սահմանադրական դատարանի կարգավիճակից, սահմանադրական դատարանի որոշումների իրավական բնույթից և սահմանափակում են իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի, դատարանի մատչելիության, դատական վերանայման իրավունքներն ու անհիմն և անօրինական դատական ակտերը բողոքարկելու՝ ՀՀ դատախազության լիազորությունը:

ՀՀ Սահմանադրական դատարանի 2017թ. մարտի 28-ի ՍԴՈ-1359 որոշմամբ դիմումը բավարարվել է:

4. Պետական շահերի պաշտպանության ոլորտ

ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների, ներառյալ պետական շահերի պաշտպանության վարչության կողմից 2016թ. ընթացքում կատարվել է 333 ուսումնասիրություն, հայտնաբերվել է 327 իրավախախտում, հարուցվել է 60 քրեական գործ:

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից 59 ուսումնասիրություն է իրականացվել գյուղատնտեսության, սոցիալական ապահովության, կրթության, պետական գույքի և ֆինանսների կառավարման, հանրային ծառայությունների ոլորտների համապատասխան պետական կառավարման մարմինների և դրանց համակարգում գործող մարմինների ու կազմակերպությունների գործունեության ընթացքում պետական շահերի պաշտպանության վիճակի վերաբերյալ:

Հայտնաբերված խախտումների կապակցությամբ հարուցվել է 7 քրեական գործ:

Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում պահանջվել և ուսումնասիրվել են ՀՀ վերահսկիչ պալատի 2014-2016թթ. ընթացիկ բոլոր հաշվետվությունները՝ թվով 63, հայտնաբերված խախտումների կապակցությամբ հարուցվել է 7 քրեական գործ:

Ընդհանուր առմամբ պետական շահերի պաշտպանության վարչության ուսումնասիրությունների արդյունքում հարուցվել է 14 քրեական գործ, համապատասխան մարմինների ղեկավարներին ներկայացվել է 5 հաղորդում, հարուցվել է պետական շահերի պաշտպանության 14 հայց:

Մասնավորապես.

Գյուղատնտեսության ոլորտ

Քրեական գործեր են հարուցվել «Սերմերի գործակալություն», «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն», «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություններում արձանագրված խախտումների վերաբերյալ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարին հաղորդումներ են ուղարկվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունում», «Լիցենզավորման կենտրոն» գործակալությունում, ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեում, «Ագրոքիմիական ծառայություն», «Հայանտառ» ՊՈԱԿ-ներում արձանագրված խախտումների վերաբերյալ:

Սոցիալական ապահովության ոլորտ

Քրեական գործեր են հարուցվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորքի տուն-ինտերնատ», «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ներում, «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամում, Կոտայքի և Արագածոտնի մարզերի սոցիալական ծառայության տարածքային գործակալություններում արձանագրված խախտումների կապակցությամբ:

Կրթության ոլորտ

Քրեական գործ է հարուցվել ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկում արձանագրված խախտումների կապակցությամբ:

Հանրային ծառայությունների ոլորտ

Քրեական գործ է հարուցվել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում արձանագրված խախտումների կապակցությամբ:

Պետական գույքի և ֆինանսների կառավարման ոլորտներ

Քրեական գործեր են հարուցվել ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունում և ֆինանսների նախարարությունում արձանագրված խախտումների կապակցությամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ

Քրեական գործ է հարուցվել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամում արձանագրված խախտումների կապակցությամբ:

2016թ. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության նախագծերով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից քաղաքացիական դատավարության կարգով դատարան է հարուցվել 66 մլն 084 հազ. դրամ հայցապահանջով 14 հայց: Դատարանները քննել և դատական ակտեր են կայացրել 157 մլն 656 հազ. դրամի 12 հայցով, ներառյալ՝ նախորդ տարիներին հարուցված հայցերով, որոնցից բավարարվել է 156 մլն 669 հազ. դրամի 11 հայցադիմում, փաստացի վերականգնվել է 33 մլն 461 հազ. դրամ, մերժվել է 986.864 դրամ հայցագնով 1 հայց՝ հայցային վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով, իսկ 29 հայցի դատաքննություն դեռևս ընթացքի մեջ է:

2016թ. ընթացքում դատախազության մարմինները, ներառյալ վարչությունը, դատարան են հարուցել 50 հայց՝ 4 մլրդ 730 մլն 921 հազ. դրամի բռնագանձման պահանջով:

2016թ., ներառյալ նախորդ տարիներին հարուցված հայցերով, բավարարվել է 187 մլն 646 հազ. դրամի հայցապահանջով 38 հայց, մերժվել՝ 3 մլն 224 հազ. դրամի հայցապահանջով 4 հայց (պետական շահերի պաշտպանության վարչության հարուցած 1 հայցը՝ 986.864 դրամի պահանջով՝ հայցային վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, Շիրակի մարզի դատախազության հարուցած 2 հայցը՝ ընդհանուր 2.237.500 դրամ գումարով՝ ոչ ճիշտ անձի դեմ հայցը հարուցելու հիմքով, հետագայում հայցերը կրկին ներկայացվել են ու բավարարվել և Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության հարուցած 1 հայցը՝ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքում պարտապանի բաժնեմասն առանձնացնելու պահանջով՝ պատասխանողին բաժնեմաս չպատկանելու հիմքով), ընթացքում է 5 մլրդ 498 մլն 944 հազ. դրամի հայցապահանջով 76 հայց:

2016թ. դատախազության մարմինները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական և ՀՀ Վճռաբեկ դատարաններ են ներկայացրել համապատասխանաբար՝ 12 վերաքննիչ և 9 վճռաբեկ բողոք: 12 վերաքննիչ բողոքից 5-ը մերժվել է, 4-ը՝ վերադարձվել, իսկ 3-ը ընթացքի մեջ է: 9 վճռաբեկ բողոքից 5-ով վարույթ ընդունելը ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներով մերժվել է, իսկ 4-ը ընթացքի մեջ է:

2016թ. նոյեմբերի 11-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ անցկացվել է խորհրդակցություն Երևան քաղաքի, վարչական շրջանների և մարզերի դատախազությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ քննարկվել են պետական շահերի պաշտպանության ոլորտում դատախազության մարմինների գործունեությունում առկա խնդիրները, դրանց լուծմանն ուղղված քայլերը և հանձնարարվել է ակտիվացնել ոլորտում տարվող աշխատանքները:

Նշված խորհրդակցության արդյունքում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից տրվել է կարգադրություն՝ 2013-2015թթ. ընթացքում նախապատրաստված նյութերով և հարուցված քրեական գործերով պետությանը պատճառված վնասի հատուցման գործընթացի և արդյունքների վերաբերյալ տեղեկություն տրամադրելու մասին:

Ստացված տեղեկության ուսումնասիրության արդյունքներով հանձնարարականներ են տրվել դատախազության տարածքային մարմիններին:

5. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ոլորտ

2016թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է հանցագործության 72 դեպք (2015թ.՝ 90), այդ թվում՝ թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության 46 դեպք (2015թ.՝ 69), ծեծի՝ 3 (2015թ.՝ 2), դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու՝ 2 (2015թ.՝ 1), փախուստի փորձի՝ 2 (2015թ.՝ 1), քրեակատարողական հիմնարկի գործունեությանը խոչընդոտելու՝ 2 (2015թ.՝ 2), խարդախության՝ 2, գողության՝ 1, գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու՝ 2, պաշտոնեական լիազորությունների չարաշահման՝ 1, զանգվածային անկարգությունների՝ 1, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու՝ 2, պաշտոնեական լիազորությունների անցման՝ 1 և իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու 1 դեպք (2015թ.՝ 2):

2016թ. մեկով ավելացել են ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում արձանագրված մահվան դեպքերը՝ արձանագրվել է 29 մահվան դեպք (2015թ.՝ 28): Արձանագրված մահվան դեպքերից 7-ով հարուցվել են քրեական գործեր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, 22-ով նախապատրաստվել են նյութեր, որոնցով պարզվել են մահվան պատճառները և որոշումներ են կայացվել հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Հանցագործություն կատարած անձանցից 56-ը եղել են պահվող անձինք, 17-ը՝ քաղաքացիներ, 7-ը՝ ՔԿՀ ծառայողներ, իսկ 8-ի անձը չի պարզվել:

2016թ. հոգեբուժական հաստատություններում հանցագործությունների դեպքեր չեն գրանցվել:

2016թ. կատարվել է 74 ստուգում և ուսումնասիրություն, որոնցից 63-ը՝ քրեակատարողական հիմնարկներում, 11-ը՝ այլընտրանքային պատիժների կատարման ծառայությունում: Կատարված ստուգումների արդյունքներով հայտնաբերվել է 120 խախտում, ներկայացվել է 17 հաղորդում և բերվել է 28 միջնորդություն, որոնց հիման վրա նշանակվել են ծառայողական քննություններ և իրենց պարտականություններում թերացած 19 աշխատակից, այդ թվում՝ 5 քրեակատարողական հիմնարկի պետ, ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Ընդ որում՝ դատախազության ստուգումների արդյունքում ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետը ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Կատարված ստուգումների արդյունքներով հարուցվել է 6 քրեական գործ:

ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչության կողմից 2016թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում ստուգումներ են կատարվել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքով, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահման մասին» ՀՀ օրենքով և «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ սահմանված՝ բժշկական օգնություն ստանալու իրավունքի պահպանման ոլորտում: Մասնավորապես, ստուգվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց»

քրեակատարողական հիմնարկում 2016 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ մեկ ամսից ավելի ժամանակով պահվող և բուժման մեջ գտնվող կալանավորված անձանց և պատիժ կրող հիվանդ դատապարտյալների առողջական վիճակի, բուժման կազմակերպման արդյունավետության և առողջանալուց հետո դուրս գրման գործընթացը: Արդյունքում՝ թվով 8 պահվող հիվանդ կալանավորված անձինք և դատապարտյալներ, որոնք առանց որևէ հիմնավորման տևական ժամանակ գտնվում էին ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում, ներկայացվել են դուրսգրման և տեղափոխվել համապատասխան քրեակատարողական հիմնարկներ:

Հայտնաբերված խախտումների պատճառները պարզելու, ինչպես նաև աշխատանքում թերացած պաշտոնատար անձանց պատասխանատվության, այդ թվում՝ կարգապահական ներգործության հարցը լուծելու նպատակով, համապատասխան միջնորդագիր է ներկայացվել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետին, որի արդյունքում ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետը, պետի բուժական գծով տեղակալը և հիմնարկի ինֆեկցիոն բաժանմունքի պետը ՀՀ ԱՆ ՔԿՎ պետի հրամաններով ենթարկվել են կարգապահական տույժերի:

2016թ. դեկտեմբերի 19-ից 21-ն ընկած ժամանակահատվածում ստուգումներ են կատարվել ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց բժշկական օգնություն ստանալու իրավունքի պահպանման ոլորտում: Մասնավորապես, ստուգվել են ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնար բաժանմունքում բուժում ստացած դատապարտյալների բժշկական քարտերը և հիվանդության պատմագրերը, ինչի արդյունքում պարզվել է, որ առկա են դատապարտյալներ, որոնք 14 օրից ավելի տևական ժամանակ գտնվել են ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում՝ առանց համապատասխան բժշկական հիմնավորման:

Հայտնաբերված խախտումների պատճառները պարզելու, ինչպես նաև աշխատանքում թերացած պաշտոնատար անձանց պատասխանատվության, այդ թվում՝ կարգապահական ներգործության հարցը լուծելու նպատակով, համապատասխան միջնորդագիր է ներկայացվել ՀՀ ԱՆ ՔԿՎ պետին, որի արդյունքում ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ-ի պետը և նույն քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի կրտսեր մասնագետը ՀՀ ԱՆ ՔԿՎ պետի հրամաններով ենթարկվել են կարգապահական տույժերի:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում հնարավոր կոռուպցիոն երևույթներ հայտնաբերելու, մասնավորապես՝ պահվող անձանց արտոնյալ պայմանները բացառելու ուղղությամբ, ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանման կողմից 2016 թվականի ընթացքում ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազության հանձնարարությամբ անազատության մեջ պահվող անձանց խցերում և կացարաններում իրականացվել է 70 խուզարկություն: Խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել են մի շարք արգելված իրեր և առարկաներ, որոնց ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ ներթափանցման ուղիները պարզելու և մեղավոր անձանց հայտնաբերելու նպատակով իրականացվել են ծառայողական քննություններ, որի արդյունքում քրեակատարողական

հիմնարկների մի շարք ծառայողներ և քրեակատարողական հիմնարկներում պահվող անձինք ենթարկվել են կարգապահական տույժերի:

ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչության հանձնարարությամբ և անմիջական հսկողությամբ արգելված իրեր և առարկաներ հայտնաբերելու նպատակով 2016 թվականի դեկտեմբերի 16-ին խուզարկվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի երկրորդ մասնաշենքի 20 խուց, որի արդյունքում հայտնաբերվել և առգրավվել են արգելված մի շարք իրեր, առարկաներ և սննդամթերք:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց արտոնյալ պայմանների հայտնաբերման նպատակով ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանման կողմից պարբերաբար ստուգվել է նրանց տրված տույժերի ու խրախուսանքների հիմնավորվածությունը: Այդ նպատակով ՀՀ գլխավոր դատախազության կողմից կայացված 9 որոշումներով կասեցվել է օրենսդրությանը հակասող ակտերի գործողությունը և դրանք վերանայելու միջնորդագրեր են ներկայացվել, որոնց արդյունքում վերացվել են քրեակատարողական հիմնարկների պետերի որոշումները:

2016թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների կողմից դատապարտյալներին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ՀՀ դատարաններ է ներկայացվել 155 միջնորդություն, որոնցից 104-ը բավարարվել է, 51-ը՝ մերժվել: Միջնորդությունների քննարկմանը մասնակցող դատախազների կողմից բերվել է 47 վերաքննիչ բողոք, որոնցից բավարարվել է 19-ը: Բերվել է 4 վճռաբեկ բողոք, որոնք վարույթ չեն ընդունվել:

2016թ. կայացված 9 որոշումով կասեցվել է օրենսդրությանը հակասող ակտերի գործողությունը և դրանք վերանայելու միջնորդագրեր են ներկայացվել, որոնց արդյունքում վերացվել են քրեակատարողական ծառայության համապատասխան պաշտոնյաների որոշումները:

2016թ. հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձվել է 19.000.000 ՀՀ դրամ, 110 անվանում ոսկյա զարդ և մեկ անշարժ գույք՝ 11.000.000 ՀՀ դրամ արժողությամբ:

Կատարված ուսումնասիրությունները վեր են հանել հանրային աշխատանքներ պատժատեսակի կատարման պրակտիկայում առկա բազմաթիվ խնդիրներ, որոնցից ամենակարևորը դրա կատարման ձևական բնույթն է: Մասնավորապես պարզվել է, որ հանրային աշխատանքների դատապարտված անձինք ձևականորեն գրանցվում են որպես աշխատողներ, սակայն փաստացի չեն գտնվում աշխատանքի վայրում և չեն կատարում որևէ աշխատանք: ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է ակտիվացնել հանրային աշխատանքներ պատժատեսակի կատարման օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը՝ առավել հաճախ ստուգումներ կատարելով նշված պատժատեսակի կատարման վայրերում:

Հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2013 թվականի ապրիլի 23-ի թիվ ՍԴՈ-1082 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների (ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում համարժեքորեն չի երաշխավորում երկու հարյուր յոթանասուն ժամից պակաս տևողությամբ հանրային աշխատանքների կիրառման իրավական հնարավորություն այն անձանց նկատմամբ, որոնք չունեն տուգանքը վճարելու հնարավորություն՝ արգելափակելով նրանց իրավական պաշտպանության

արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, ինչպես նաև տարբերակված մոտեցում չի դրսևորում տուգանքը վճարելու անհնարինության և դրանից խուսափելու հանգամանքների միջև) պայմաններում տուգանք պատժատեսակի կատարումը գործնականում դարձել է անհնարին, իսկ դրա նշանակումը փաստորեն ձևական, ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ և 54-րդ հոդվածներում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ՝ պատժի անխուսափելիության սկզբունքի ապահովման նպատակով:

Նկատի ունենալով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի իրավակարգավորումից բխող անընդունելի այն պրակտիկան, որի համաձայն դատավճռով սահմանված մինչև երկու տարի ժամկետով ազատազրկում պատիժը մեխանիկորեն փոխարինվում է հանրային աշխատանքներով, որպիսի պայմաններում չի ապահովվում պատժի նպատակների իրականացումը, նույն նախագծով առաջարկվել է սահմանել, որ դատարանը դատապարտյալի՝ որոշակի ժամկետով ազատազրկումը հանրային աշխատանքով փոխարինելու մասին դիմումը քննարկելիս պետք է հաշվի առնի հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը, բնույթը, դատապարտյալի անձը բնութագրող տվյալները, պատճառված վնասը հատուցելու մասին պահանջի բացակայությունը կամ հատուցված լինելը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք կհիմնավորեն անձի նկատմամբ նշանակված ազատազրկումը հանրային աշխատանքներով փոխարինելու հիմնավորվածությունն ու արդարացիությունը պատժի նպատակների իրականացման տեսանկյունից՝ այդ կերպ ապահովելով այս պատժատեսակի կիրառման արդյունավետությունն ու պատժի անխուսափելիության սկզբունքի իրագործումը:

ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ քննարկումների արդյունքում նշված նախագիծը ներկայացվել է ՀՀ Կառավարություն, որտեղ արժանացել է հավանության և ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով:

6. Միջազգային-իրավական համագործակցության ոլորտ

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազությունը իրականացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ և 54[1]-րդ գլուխներով ու միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների՝ իրեն վերապահված գործառույթների իրականացումն ըստ հետևյալ հիմնական ուղղությունների.

1. Քրեական գործերով իրավական օգնություն (ներառյալ՝ քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ուղարկվող և ստացվող հարցումների կատարման ապահովում):
2. Քրեական հետապնդման ենթարկելու նպատակով անձանց հանձնելու մասին միջնորդություններն այլ պետությունների իրավասու մարմիններին ներկայացնելու ապահովում (հանձնման մասին ուղարկվող միջնորդությունների նախապատրաստում, անհրաժեշտ փաստաթղթերի լրիվության ապահովում):
3. Այլ պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված անձանց վերաբերյալ էքստրադիցիոն ստուգումների իրականացում, անհրաժեշտության դեպքում նրանց ժամանակավոր, հանձնման համար կալանավորման, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների ներկայացում դատարան, հանձնումը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի որոշման նախագծի նախապատրաստում, որոշման բողոքարկման դեպքում դատարաններում դատախազության մասնակցության ապահովում:
4. Քրեական հետապնդման միջնորդությունների (քրեական գործերի և նյութերի) փոխանցում, դրանցում առկա փաստաթղթերի միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխանեցման ապահովում:

2016 թվականի ընթացքում ՀՀ դատախազության կողմից քննարկվել և ընթացք է տրվել միջազգային-իրավական համագործակցության ոլորտին վերաբերող 7353 փաստաթղթի (2015թ.՝ 7140), որից՝ 3700-ը (2015թ.՝ 3428) ստացվել են օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից, իսկ 3653-ը (2015թ.՝ 3712)՝ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկված հարցումներն են:

2016 թվականի ընթացքում ԱՊՀ մասնակից-պետությունների դատախազություններ ուղարկվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 185 (2015թ.՝ 213), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 181 (2015թ.՝ 170) միջնորդություն:

2016թ. քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 206 միջնորդություն (2015թ.՝ 205), իսկ այլ օտարերկրյա պետություններից՝ 10 (2015թ.՝ 19) միջնորդություն:

2016թ. իրականացվել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 76 (2015թ.՝ 72) միջնորդությունների նախապատրաստման և ուղարկման կազմակերպումը, որոնցից 64-ն ուղարկվել է ԱՊՀ մասնակից-

պետությունների, իսկ 12-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը:

Ուսումնասիրվում են ՀՀ իրավապահ մարմինների կողմից հետախուզվողների հայտնաբերման մասին ստացված հեռագրերի հիման վրա պահանջված փաստաթղթերի փաթեթները, պահանջվում են դրանց լրամշակված տարբերակները, իսկ անհրաժեշտության դեպքում, օտարերկրյա պետություններում դրանց քննարկման ընթացքում միջազգային պայմանագրերի համաձայն, հայցվել և տրամադրվել են լրացուցիչ տեղեկություններ:

Այս գործընթացի ճիշտ կազմակերպման արդյունքում բացառվում են հանձնման միջնորդությունների անհիմն մերժումները: 2016թ. ներկայացված 76 հանձնման միջնորդությունից 27-ը բավարարվել է, 8-ը՝ մերժվել, 41-ը՝ քննարկման փուլում է, բավարարվել է նաև նախկինում ներկայացված 20 միջնորդություն:

Ստացված 11 միջնորդությունից (2015թ.՝ 18) բավարարվել է 3-ը, մերժվել է 2-ը, 3-ն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 3-ը քննարկման փուլում է:

2016թ. ընթացքում ստացվել է ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 79 անձի վերաբերյալ հաղորդում:

ՀՀ դատախազության միջոցով այլ պետությունների իրավասու մարմիններ են ուղարկվել 13 (2015թ.՝ 7) քրեական գործ և նյութեր, որոնցից 12-ը ուղարկվել է ԱՊՀ իրավասու մարմիններին, իսկ 1-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին:

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ՀՀ դատախազությունում ստացվել է 9 (2015թ.՝ 11) քրեական գործ:

2016թ. Հայաստանի Հանրապետության դատախազությունը շարունակել է զարգացնել համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի համապատասխան ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության, Դատախազների միջազգային ասոցիացիայի ու Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի հետ համագործակցության ընթացքում խորհրդի քարտուղարությունից վարչությունում ստացվել է 61 փաստաթուղթ: Ստացված փաստաթղթերն ուսումնասիրվել են, ներկայացվել են կարծիքներ և առաջարկություններ, կազմվել են տեղեկատվական նամակներ: ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի գործադիր քարտուղարի խնդրանքով, տեղեկատվության փոխանակման կարգով, տրամադրվել են մի շարք տեղեկանքներ:

ՀՀ դատախազության ներկայացուցիչը մասնակցել է ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների Կոորդինացիոն խորհրդի քարտուղարությանը կից աշխատանքային խմբի նիստերին:

Իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների կատարման ընթացքում առաջացող խնդիրները վեր հանելու և դրանց համապատասխան լուծումներ տալու նպատակով՝ ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության միջոցով համապատասխան տեղեկություններ են հայցվել

ԱՊՀ անդամ պետությունների գլխավոր դատախազություններից, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության ակադեմիայից, որոնց պատասխանների հիման վրա կատարվել է համապատասխան վերլուծություն՝ ուղղված ԱՊՀ անդամ-պետությունների իրավասու մարմինների հետ քրեական գործերով համագործակցության ոլորտում աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

2016թ. ընթացքում ապահովվել է 2015-2017 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջև համագործակցության ծրագրով նախատեսված թվով 3 միջոցառումների իրականացումը, որոնցից 2-ն անցկացվել են Մոսկվա քաղաքում, իսկ 1-ը՝ Երևանում: Այդ միջոցառումներն են՝

1. «Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նկատմամբ դատախազական հսկողություն, կոռուպցիոն իրավախախտումների կանխարգելում, այդ թվում՝ դատախազական համակարգում, կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրության վերլուծություն» թեմայով կլոր սեղան (Մոսկվա):

2. Հանձնման և քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հարցերով խորհրդատվություն (Երևան):

3. «Անօրինական միգրացիայի կազմակերպման և մարդկանց առևտրի դեպքերով հարուցված քրեական գործերի քննության նկատմամբ դատախազական հսկողության փորձի փոխանակում» թեմայով սեմինար (Մոսկվա):

2016թ. ընթացքում աշխատանքներ են տարվել 2018-2020 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունների միջև համագործակցության ծրագրի նախագծի նախապատրաստման ուղղությամբ:

2016թ. ընթացքում նախապատրաստվել է նաև Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության գլխավոր դատախազությունների միջև համագործակցության մասին հուշագրի նախագիծը, որի ստորագրումը նախատեսվում է 2017 թվականին:

2016թ. 24 դատախազներ մասնակցել են ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի, Դատախազների միջազգային ասոցիացիայի և այլ շրջանակներում կազմակերպված կոնֆերանսներին, սեմինարներին և խորհրդակցություններին:

7. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման գործունեության ոլորտ

Հաշվետու ժամանակաշրջանում իրավական ապահովման ոլորտում ՀՀ դատախազության կողմից դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունների հիման վրա մշակվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, որոնց նպատակն է կատարելագործել ՀՀ օրենսդրությունը և բարելավել ՀՀ դատախազության գործունեությունը, ամփոփվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացված կարծիքները, գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին ներկայացվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ամփոփ կարծիքներ:

Մասնավորապես, հաշվետու ժամանակաշրջանում իրավաստեղծ գործունեության ոլորտում իրականացվել են իրավական ակտերի մշակման և լրամշակման աշխատանքներ, որոնց արդյունքում ներկայացվել է 3 (2015թ.՝ 5) օրենսդրական նախաձեռնություն՝ շուրջ 6 (2015թ.՝ 6) օրենքի նախագիծ:

Մշակվել է ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների հրամանների 121 (2015թ.՝ 76*)* նախագիծ: ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով վերանայվել են մի շարք նախկին հրամաններ, ինչի արդյունքում դրանցով սահմանված պահանջները համապատասխանեցվել են գործող իրավակարգավորումներին, մի շարք հարցեր ստացել են ամբողջական, հստակ ու համապարփակ լուծումներ՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծելով դրանց պահանջների կատարման համար:

2016թ. ստացվել են ՀՀ օրենքների 50 (2015թ.՝ 193), կառավարության որոշումների 21 (2015թ.՝ 36) նախագծեր, որոնք ուսումնասիրվել են և դրանց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան կարծիքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ դատախազությունը շարունակել է իրականացնել.

1) ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Ն ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածներով ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները,

2) ՀՀ Նախագահի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-159-Ն կարգադրության՝ ՀՀ Կառավարության կողմից 2014 թվականի փետրվարի 27-ին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 303-Ն որոշմամբ նախատեսված միջոցառումների ծրագրով ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները,

3) ՀՀ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը

հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 15-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշմամբ հաստատված հավելվածով՝ ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները:

2016 թվականի ընթացքում ՀՀ դատախազությունն աջակցել է դատախազության աշխատողների ուսուցման և որակավորման բարձրացման գործընթացի արդյունավետության բարելավմանը: Դատախազները ներգրավված են դատախազների վերապատրաստման, ինչպես նաև դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման գործընթացին:

Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից շարունակվել է «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի հրատարակման աշխատանքների կազմակերպումը: 2016 թվականին հրատարակվել է «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի 6 (2015թ.՝ 6) համար:

ՀՀ դատախազության միատեսակ և միասնական գործունեությունն ապահովելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին և դատախազություններին ուղարկվել է 10 (2015թ.՝ 29) շրջաբերական, որոնք վերաբերել են ՀՀ դատախազության գործունեությանն առնչվող իրավական ակտերում կատարված փոփոխություններին, լրացումներին, ՀՀ Վճռաբեկ դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին, ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներին և այլ իրավական ակտերին:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ դատախազությունը ՀՀ օրենսդրության կատարելագործման հարցերով ակտիվորեն համագործակցել է այլ գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ: Դրանցից են.

1) ՀՀ դատախազության ներկայացուցիչները ընդգրկված են եղել «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծի մշակման նպատակով ստեղծված աշխատանքային և «Ընտանեկան բռնության դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբերի կազմերում ու հաշվետու ժամանակահատվածում իրենց մասնակցությունն են ունեցել աշխատանքային խմբերի գործունեությանը:

2) ՀՀ դատախազության ներկայացուցիչն ընդգրկված է «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թվականի կոնվենցիայի հարցերով փորձագետների միջգերատեսչական մշտական աշխատանքային խմբում և հաշվետու ժամանակահատվածում բազմիցս մասնակցել է աշխատանքային խմբի նիստերին:

3) ՀՀ դատախազության ներկայացուցիչն ընդգրկված է ՀՀ արդարադատության նախարարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ իրականացվող՝ «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագրի շրջանակներում ձևավորված «Անչափահասների արդարադատության» խորհրդի կազմում:

4) ՀՀ դատախազության ներկայացուցիչներն ընդգրկված են ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Արդարադատության մոնիթորինգ» ծրագրի վերստուգող

հանձնաժողովի կազմում և հաշվետու ժամանակահատվածում մասնակցել են հանձնաժողովի նիստերին:

Հաշվետու ժամանակաշրջանում վերլուծվել են ՀՀ գլխավոր դատախազության 2016 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակների աշխատանքի ծրագրով նախատեսված, ընդհանուր առմամբ՝ 15 կետի (2015թ.՝ 13) պահանջների կատարման վերաբերյալ ՀՀ *գլխավոր դատախազության* կառուցվածքային ստորաբաժանումների *(այսուհետ՝ կառուցվածքային ստորաբաժանում*) և ՀՀ զինվորական դատախազության կողմից տրված տեղեկանքները (զեկուցագրերը) և ապահովվել է դրանց հետագա քննարկումը ՀՀ գլխավոր դատախազին և ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալներին առընթեր օպերատիվ խորհրդակցություններում, ՀՀ դատախազության կոլեգիայի նիստերում, այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազին ներկայացվել են համապատասխան եզրակացություններ:

Ուսումնասիրվել, վերլուծվել և ամփոփվել է դատախազություններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և առանձին դատախազներից ստացված՝ 2015 թվականի տարեկան աշխատանքների արդյունքների հաշվետվության վերաբերյալ 28 (2015թ.՝ 31) զեկուցագիր:

Ուսումնասիրվել, ամփոփվել և վերլուծվել է 2015թ. տարեկան աշխատանքների վերաբերյալ դատախազությունների կողմից ներկայացված օպերատիվ խորհրդակցության 14 (2015թ.՝ 32) արձանագրություն:

Դատախազների կողմից ծառայողական պարտականությունների կատարման և վարքագծի կանոնների պահպանման, ինչպես նաև օրենքի պահանջների կատարման վիճակը պարզելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների հանձնարարությամբ և նախաձեռնությամբ իրականացվել է 3 կարգապահական վարույթ՝ 3 դատախազի նկատմամբ, որից 1 կարգապահական վարույթ 1 դատախազի նկատմամբ տեղափոխվել է 2017 թվական (2015թ.՝ 2 կարգապահական վարույթ՝ 2 դատախազի նկատմամբ):

Ավարտված կարգապահական վարույթների արդյունքներով **1 դատախազի** նկատմամբ կարգապահական վարույթը դադարեցվել է, **1 դատախազի** նկատմամբ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի կողմից համաձայնություն և դրական եզրակացություն է տրվել ու նշանակվել է «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» տեսակի կարգապահական տույժը:

2016թ. ընթացքում քաղաքացիների դիմում-բողոքների և առանձին ստուգումների արդյունքներով իրականացվել է 12 ծառայողական քննություն՝ 14 դատախազի նկատմամբ (2015թ.՝ 25 ծառայողական քննություն՝ 30 դատախազի նկատմամբ)*:*

Դատախազության տարեկան գործունեության արդյունքները, ինչպես նաև դրա ընթացքում ի հայտ եկած առանձին կոնկրետ խնդիրները նախապես ներառվելով դատախազության աշխատանքի ծրագրերում, կամ գործնականում ի հայտ եկած անհրաժեշտության դեպքերում դատախազության ստորաբաժանումների նախաձեռնությամբ, քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայում, դրանց վերաբերյալ կայացվել են որոշումներ:

Կոլեգիայում քննարկված հարցերը վերաբերել են դատախազության գործունեության կազմակերպման արդիական խնդիրներին, որոնք տևական ժամանակ վիճելի են համարվել իրավական պրակտիկայում կամ վեր են հանվել առանձին հարցերի կոնկրետ ուսումնասիրությունների արդյունքում: Դատախազության կոլեգիայի

նիստերին հրավիրվել են ՀՀ հետաքննության և նախաքննության մարմինների, կոնկրետ հարցերի քննարկմանը շահագրգիռ այլ պետական մարմինների ներկայացուցիչներ, ովքեր ներկայացրել են իրենց լիազորությունների իրականացմանն առնչվող հարցերի կապակցությամբ մոտեցումներ, որոնք ևս քննարկվել և գնահատվել են որոշումներ ընդունելիս:

ՀՀ դատախազության կոլեգիան, ընդգծված միտում ունենալով հստակեցնել կոնկրետ ոլորտներում հանցավորության դեմ պայքարի քաղաքականության ուղղությունները, պայմաններ ապահովել դրանց իրացման համար, վեր հանել դրանց վերաբերող իրավակարգավորման և կիրառության խնդիրներն ու սահմանել դրանց հիմնավորված լուծումներ, հավակնում է զգալի դեր ունենալ իրավապահպան գործունեության ոլորտում որոշակիության և կանխատեսելիության, երաշխավորման գործում:

8. *ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ*

1) Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ.

2016թ. ընթացքում ՀՀ զիվորական դատախազության գործունեության ոլորտում՝ ՀՀ ԶՈՒ–ի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 3843 (2015թ.՝ 3825) դեպք: Աճ է արձանագրվել 18 դեպքով կամ 0.5%-ով: Արձանագրված դեպքերից 2440-ը (2015թ.՝ 2492) կամ 63.5%-ը (2015թ.՝ 65.1%) եղել են պատահարներ-զանցանքներ, 1394-ը (2015թ.՝ 1323) կամ 36.3%-ը՝ (2015թ.՝ 34.6%) հանցագործություններ, այդ թվում՝ 681-ը (2015թ.՝ 794) կամ 48.9%-ը (2015թ.՝ 60.0%)՝ զինվորական, 713-ը (2015թ.՝ 529) կամ 51.1%-ը (2015թ՝ 40.0%)՝ այլ ընդհանուր, 9 դեպքի (2015թ.՝ 10) կամ 0.2%-ի (2015թ.՝ 0.3%) հանգամանքները ամփոփումների պահին դեռևս պարզված չեն եղել:

Նախորդ տարվա համեմատ պատահարները նվազել են 52 դեպքով կամ 2.1%-ով, հանցագործություններն աճել են 71-ով կամ 5.4%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունները նվազել են 113-ով կամ 14.2%-ով, իսկ այլ հանցագործություններն աճել՝ 184-ով կամ 34.8%-ով: Եթե 2015թ. ընթացքում արձանագրված 1323 հանցագործությունից 273-ը կամ 20.6%-ը եղել է ծանր և առանձնապես ծանր, որոնցից 118-ը՝ ծանր, իսկ 155-ը՝ առանձնապես ծանր, ապա 2016թ. արձանագրված 1394 հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել 483-ը կամ 34.6%-ը, որոնցից 117-ը՝ ծանր, 366-ը՝ առանձնապես ծանր: Այսինքն, նախորդ տարվա համեմատ ծանր հանցագործությունները նվազել են 1-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործություններն աճել 211-ով:

ՀՀ ԶՈՒ և այլ զորքերի զորամասերում հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված 1394 (2015թ.՝ 1323) հանցագործությունները, ըստ հանցատեսակների, ունեն հետևյալ պատկերը.

- զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների 378 դեպք (2015թ.՝ 383), նվազում 5-ով կամ 1.3%-ով,
- զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված հանցագործությունների 176 դեպք (2015թ.՝ 274), նվազում 98-ով կամ 35.8%-ով,
- հատուկ ծառայությունների կրման կարգի դեմ ուղղված հանցագործությունների 25 դեպք (2015թ.՝ 20), աճ 5-ով կամ 25%-ով,
- ռազմական գույքն օգտագործելու և պահպանելու, զենքի, ռազմամթերքի, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու հետ կապված հանցագործությունների 28 դեպք (2015թ.՝ 30), նվազում 2-ով կամ 6.7%ով,
- զինվորական պաշտոնեական հանցագործությունների 52 դեպք (2015թ.՝ 75), նվազում 23-ով կամ 30.7%-ով,
- ռազմական տեխնիկայի օգտագործման կարգի դեմ ուղղված հանցագործությունների 22 դեպք (2015թ.՝ 12), աճ 10-ով կամ 83.3%-ով:

Այլ ընդհանուր հանցագործություններն, ըստ հանցատեսակների, 2015թ. համեմատությամբ ունեն հետևյալ պատկերը.

- կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների 473 դեպք (2015թ.՝ 279), աճ 194-ով կամ 69.5%-ով,

- անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունների 3 դեպք (2015թ.՝ 9), նվազում 6-ով կամ 66.7%ով,

- սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների 8 դեպք (2015թ.՝ 10), նվազում 2-ով կամ 20%-ով,

- սեփականության դեմ ուղղված հանցագործությունների 114 դեպք (2015թ.՝ 101), աճ 13-ով կամ 12.9%ով,

- հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների 54 դեպք (2015թ.՝ 72), նվազում 18-ով կամ 25%-ով,

- հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների 22 դեպք (2015թ.՝ 19), աճ 3-ով կամ 15.8%-ով,

- այլ հանցագործությունների 39 դեպք (2015թ.՝ 39):

2016թ. արձանագրված 1394 հանցագործությունից 25-ը կամ 1.8%-ը չի բացահայտել, այսինքն՝ բացահայտումը կազմել է 98.2% (2015թ. – 97.6%):

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2016թ., զինվորական հանցագործությունների մեջ առավել տարածված են մնում ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները: Եթե 2015թ. արձանագրվել է նման հանցագործության 383 դեպք, ապա 2016թ. դրանց թիվը կազմել է 378:

Բավական նվազել է հանցավորության մակարդակը սպաների շրջանում. եթե 2015թ. արձանագրվել է սպաների կողմից կատարված հանցագործության 315 դեպք, ապա 2016թ.՝ 268, այսինքն՝ նվազում է արձանագրվել 47-ով դեպքով կամ 14.9%-ով:

Պետք է փաստել, որ առավել շատ հանցագործությունները կատարվել են ժամկետային զինծառայողների կողմից՝ 605 (2015թ.՝ 644, որից ԱԱԾ ՍԶ՝ 2), սպաների կողմից՝ 281, որոնցից ՌԴ ՍԶ՝ 1 (2015թ.՝ 315, որից ԱԱԾ ՍԶ՝ 1), պայմանագրային զինծառայողների կողմից՝ 253, որոնցից ՀՀ ՈԶ, ԱԱԾ ՍԶ՝ 8 (2015թ.՝ 255, որից ՀՀ ՈԶ, ԱԱԾ ՍԶ՝ 21) և ենթասպաների կողմից՝ 28 (2015թ.՝ 37, որոնցից ԱԱԾ ՍԶ՝ 1): Այլ ընդհանուր հանցագործություններ են կատարվել նաև հակառակորդի կողմից՝ 358 (2015թ.՝ 152), քաղաքացիական անձանց կողմից՝ 62 (2015թ.՝ 71), աշխարհազորայինների կողմից՝ 10:

2016թ. արձանագրված հանցագործություն կատարած զինծառայողների թվաքանակում սպաների տեսակարար կշիռը կազմում է 24.1% (2015թ.՝ 25.2%), ենթասպաներինը՝ 2.4% (2015թ.՝ 2.9%), պայմանագրային զինծառայողներինը՝ 21.7% (2015թ.՝ 20.4%), ժամկետային զինծառայողներինը՝ 51.8% (2015թ.՝ 51.5%):

2016թ. ՀՀ զինվորական դատախազության դատախազների հսկողությամբ նախապատրաստվել է 6334 նյութ (2015թ.՝ 5339), որոնցից 3184-ը (2015թ.՝ 3084)՝ քննչական, 3150-ը (2015թ.՝ 2255)՝ ՌՈ ստորաբաժանումների և զորամասերի կողմից: Քննչական ստորաբաժանումների կողմից նախապատրաստված 3184 նյութից 2525-ով (2015թ.՝ 2540) հարուցվել են քրեական գործեր, 642-ը (2015թ.՝ 514)՝ մերժվել է, որոնցից 400-ը (2015թ.՝ 386)՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 121-ը (2015թ.-122)՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-13-րդ կետերի, 121-ը (2015թ.՝ 6)՝ ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, 8 (2015թ.՝ 8) նյութեր ուղարկվել է ըստ ենթակայության, 7 (2015թ.՝ 13) նյութ միացվել է այլ նյութերի, իսկ 2 (2015թ.՝ 9) նյութ փոխանցվել է 2017թ.: Մերժված 514 նյութի օրինականությունն ստուգվել և հաստատվել է:

2016թ. ՀՀ ՊՆ ՌՈ մարմինների և զորամասերի կողմից նախապատրաստվել է 3150 նյութ (2015թ.՝ 3225): Դրանցից 2308-ով (2015թ.՝ 2240) մերժվել է քրեական գործի հարուցումը: Այդ թվում՝ 2270 (2015թ.՝ 2204)՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 38-ը (2015թ.՝ 36)՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, 826-ն (2015թ.՝ 970) ուղարկվել են ըստ ենթակայության, 16 (2015թ.՝ 15) նյութ փոխանցվել է 2017թ.:

Հետաքննության մարմինների կողմից նախապատրաստված նյութերով կայացված 2308 մերժման որոշումից 4-ը վերացվել է և հարուցվել են քրեական գործեր: Դրանցից 3-ը միացվել են մեկ վարույթում:

2016թ. ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ՀՀ ՔԿ ԶՔԳՎ բաժինների վարույթում քննվող 4818 (2015թ.՝ 4780) քրեական գործի նկատմամբ: Դրանցից 950-ը (2015թ.՝ 640) փոխանցվել են 2015թ.-ից, 3913-ը (2015թ.՝ 2946) հարուցվել են 2016թ., որոնցից 2765-ը (2015թ.՝ 2759)՝ քննչական մարմնի, 3-ը (2015թ.՝ 7)՝ հետաքննական մարմնի, 130-ը (2015թ.՝ 186)՝ կայազորների զինվորական դատախազների կողմից, 296-ը (2015թ.՝ 203) ստացվել են այլ մարմիններից, 14-ը (2015թ.՝ 19) անջատվել են այլ քրեական գործերից, 704-ով (2015թ.՝ 970) վերսկսվել է նախաքննությունը, 1-ը (2015թ.՝ 2) դատախազի կողմից վերադարձվել է լրացուցիչ նախաքննության:

2262 (2015թ.՝ 2199) քրեական գործի նախաքննությունն ավարտվել է: Ավարտված քրեական գործերից 510-ը՝ 807 անձանց նկատմամբ (2015թ.՝ 666 գործ, 1003 անձ) մեղադրական եզրակացությամբ, 3 գործ 3 անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ (2015թ.՝ 5 գործ, 5 անձ) ուղարկվել են դատարաններ:

1749 (2015թ.՝ 1528) քրեական գործով վարույթը կարճվել է, 1463-ով (2015թ.՝ 1496)՝ կասեցվել է, 195-ը (2015թ.՝ 77)՝ ուղարկվել է ըստ ենթակայության, 265-ը (2015թ.՝ 98)՝ միացվել այլ գործերի, 630-ը՝ (2015թ.՝ 905) փոխանցվել 2017թ.:

2016թ. ընթացքում վերացվել է քրեական գործով վարույթը կարճելու 6 (2015թ.՝ 6) որոշում, որոնցից 5-ը վերացվել է դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի, 1-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

2016թ. վերացվել է քրեական գործով վարույթը կասեցնելու 4 որոշում (2015թ.՝ 6):

Հաշվետու ժամանակաշրջանում դատախազների կողմից քրեական գործերով տրվել է 191 (2015թ.՝ 203) գրավոր ցուցում: Ցուցումների դեմ բողոք չի բերվել:

2016թ. քրեական գործերով և նյութերով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով՝ հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին, դատախազների կողմից ներկայացվել է 198 (2015թ.՝ 148) միջնորդագիր:

Բացի այդ, քրեական գործերով և նյութերով դատախազների կողմից պետական և այլ մարմիններին ներկայացվել են 36 (2015թ.՝ 26) միջնորդություններ և հաղորդումներ:

2016թ. ընթացքում դատախազների կողմից լրացուցիչ նախաքննության է վերադարձվել 1 (2015թ.՝ 2) քրեական գործ:

2016թ. մինչդատական վարույթում նյութերով քրեական գործերի հարուցումը մերժելու, վարույթը կարճելու և վարույթը կասեցնելու ոչ մի որոշում չի վերացվել դատարանի կողմից: Դատարանի կողմից վերացվել է վարույթը կասեցնելու 1 որոշում, որը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան: Բողոքը չի բավարարվել և քրեական գործի նախաքննությունը վերսկսվել է:

2016թ. քննչական մարմինների վարույթում քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել են հանցագործություններով պետությանը 66.450.291 (2015թ.՝ 471.864.192) դրամի վնասի պատճառման փաստեր, որից մինչդատական վարույթում վերականգնվել է 14.331.247 (2015թ.՝ 466.220.986) դրամը:

2016թ. ընթացքում հետաքննության և նախաքննության բնագավառի աշխատանքների հետ կապված կատարվել են 594 (2015թ.՝ 533) ուսումնասիրություններ, ստուգումներ և ամփոփումներ:

2) Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ.

Զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից մեղադրական եզրակացությամբ դատարաններ է ուղարկվել 513 քրեական գործ, 810 անձի (2015թ.՝ 666 գործ, 1004 անձ) վերաբերյալ:

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ ընդհանուր առմամբ 477 քրեական գործ 722 անձի վերաբերյալ քննվել է դատարանում, որոնցից 451 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 686 անձ (2015թ.՝ 651 գործ, 926 անձ):

Դատարանների որոշումներով 15 քրեական գործ 21 անձի վերաբերյալ կարճվել է (2015թ. 6 գործ 10 անձ): Բացի այդ 1 անձ պատժի կրումից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ (2015թ. 3 անձ): 7 քրեական գործով 9 անձի վերաբերյալ և 2 առանձին քրեական գործով 2 անձի մասով կայացվել է արդարացման դատավճիռ (2015թ.՝ 7 գործ, 8 անձ), իսկ 4 քրեական գործով 4 անձի նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ (2015թ.՝ 8 գործ, 8 անձ):

Դատապարտված 686 անձից 610-ը եղել է զինծառայող (2015թ.՝ 870): Դատապարտված զինծառայողներից 165-ը եղել է սպա (2015թ.՝ 208), 445-ը՝ պայմանագրային և ժամկետային զինծառայող (2015թ.՝ 662): Նախորդ տարվա համեմատ 260-ով նվազել է դատապարտված զինծառայողների թիվը: Զինծառայողների հետ մեկտեղ դատապարտվել է նաև 76 քաղաքացիական անձ, այդ թվում՝ 4 կին, 4 անչափահաս (2015թ.՝ 56, որից 3-ը՝ կին, 1 անչափահաս):

Դատարաններում քննված և ավարտված 477 քրեական գործից 12-ով մեղադրանքը պաշտպանվել է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժնի դատախազների, 79-ով՝ կայազորների զինվորական դատախազների, 1

քրեական գործով՝ մեկից ավելի մեղադրողների կողմից, 385-ով՝ կայազորների զինվորական դատախազությունների դատախազների կողմից:

Դատապարտված 686 անձից 108-ը դատապարտվել են ազատազրկման (2015թ.՝ 125), որոնցից 7 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը (2015թ.՝ 3), 24-ը՝ կալանքի (2015թ.՝ 69), 26-ը՝ կարգապահական գումարտակում պահելու (2015թ.՝ 48), 98-ը՝ տուգանքի (2015թ.՝ 72), 43-ը՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ (2015թ.՝ 74), պատիժը պայմանականորեն չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ 387 անձի նկատմամբ (2015թ.՝ 538): Դատապարտվածներից 12 անձ նախնական կալանքից ազատվել է այլ պատժի նշանակմամբ (2015թ.՝ 12), իսկ ազատազրկման է դատապարտվել նախնական կալանքի տակ չգտնվող 47 անձ (2015թ.՝ 43):

Դատավճռի կայացմամբ ավարտված 686 անձի վերաբերյալ 451 քրեական գործից 358-ով կամ (79.3%) 541 անձի նկատմամբ կիրառվել է դատաքննության արագացված կարգ (2015թ.՝ 529 գործով 743 անձ):

2016թ. ընթացքում մեղադրողների կողմից 1 քրեական գործով 1 անձի (2015թ. 0) վերաբերյալ մեղադրանքից հրաժարվելու հիմքով կայացվել է արդարացման դատավճիռ:

2016թ. մեղադրողների կողմից մեղադրանքը մեղմացնելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ արվել է 2 (2015թ.՝ 1) միջնորդություն 3 անձի վերաբերյալ, որը դատարանի կողմից բավարարվել է:

2016թ. 7 քրեական գործով 9 անձի վերաբերյալ և 2 քրեական գործով 2 անձի մասով դատարանի կողմից կայացվել է արդարացման դատավճիռ (2015թ.՝ 5 գործով 6 անձ): Բոլոր գործերով բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնցից 1-ը բավարարվել է, 4-ը՝ մերժվել, 2-ը ընթացքի մեջ է:

Դատարանների որոշումներով 15 քրեական գործ 21 անձի (2015թ.՝ 6 գործ, 10 անձ) վերաբերյալ կարճվել է, այդ թվում 10 անձի վերաբերյալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 7 անձի վերաբերյալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով, 4 անձի վերաբերյալ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Նշված որոշումները չեն բողոքարկվել:

Դատարանների կողմից 1 գործով 1 անձի (2015թ.՝ 1 գործով 1 անձ) վերաբերյալ կայացվել է վարույթը կասեցնելու որոշում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով: Նշված որոշումը չի բողոքարկվել:

Մեղադրողների միջնորդությամբ 208 քրեական գործով 248 անձի (2015թ.՝ 106 գործով 150 անձ) նկատմամբ դատարանի կողմից կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, իսկ 7 անձի նկատմամբ ՀՀ քր. օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակվել է սահմանված նվազագույն պատժից ավելի մեղմ պատիժ:

Դատարանների նախաձեռնությամբ 98 քրեական գործով 139 անձի (2015թ.՝ 297 գործով 388 անձ) նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և պատիժը պայմանականորեն չի կիրառվել: Դրանցից 43 գործով 49 անձի (2015թ.՝ 110 գործով 150 անձ) վերաբերյալ դատախազների կողմից բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնցից բավարարվել է 2-ը, 39-ը մերժվել է, 2-ը ընթացքի մեջ է: Նշված դատավճիռները մեղադրողների կողմից բողոքարկվել են՝ հաշվի առնելով

հանցագործության վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող հանգամանքները, ինչպես նաև պատժի նշանակմամբ սոցիալական արդարության վերականգնման, պատժի ենթարկված անձին ուղղելու հնարավորությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում մեղադրողների կողմից 69 քրեական գործով 74 անձի վերաբերյալ բերվել է վերաքննիչ բողոք (2015թ.՝ 137 գործ 167 անձ): Դրանցից 5-ը հետ է վերցվել բողոք բերած դատախազի կողմից, 2-ը հետ է վերադարձվել դատարանի կողմից, 5-ը բավարարվել է, 38-ը մերժվել, 8-ի քննությունը չի ավարտվել, 7-ով կայացվել է այլ որոշում, 4-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 44-ը բերվել է պատժի մեղմության դեմ, 7-ը՝ արդարացման կարճման, 2-ը՝ պատժի խստության, 1-ը՝ մեղադրանքի վերաորակման, 8-ը՝ այլ հիմքով:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից բողոքարկվել է 48 դատավճիռ, որոնցից 6-ով բողոքը հետ է վերցվել, 21-ը մերժվել է, 6-ը բավարարվել, 1-ով կայացվել է այլ որոշում, 1-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 13-ը ընթացքի մեջ է:

ՀՀ զինվորական դատախազի կողմից 7 քրեական գործով բերվել է վճռաբեկ բողոք, որոնցից 3-ը վարույթ չի ընդունվել, 2-ը բավարարվել է, 2-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը (2015թ.՝ 12 գործ):

Դատավարության մյուս մասնակիցների կողմից բերվել է 15 վճռաբեկ բողոք, որոնցից 2-ը վարույթ չի ընդունվել, 3-ի քննությունն ընթացքի մեջ է, 10-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը:

3) Պետական շահերի պաշտպանության ոլորտ.

ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից 2016թ. ընթացքում իրականացվել է պետական շահերի պաշտպանության հարցադրումներով 541 (2015թ.՝ 660) ուսումնասիրություն:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է պետության գույքային շահերի 326 (2015թ. 401) խախտում, պետությանը պատճառված վնասը կամովին հատուցելու անհրաժեշտության մասին 162 (2015թ.՝ 320) նախազգուշացում է արվել, ուղարկվել է 94 (2015թ.՝ 138) հաղորդում:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով 2016թ. փաստացի վերականգնվել է պետությանը պատճառված 354.011.881 (2015թ.՝ 605.068.721) դրամի վնաս:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով նախապատրաստվել և քննչական մարմիններին է փոխանցվել 169 նյութ (2015թ.՝ 177 նյութ), հարուցվել է պետական շահերի պաշտպանության 1 հայց (2015թ.՝ 2):

Պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով նախապատրաստված նյութերով քննչական մարմինների կողմից հարուցվել է 70 քրեական գործ (2015թ.՝ 95):

4) Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ.

ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից 2016թ. ընթացքում կայազորային կարգապահական մեկուսարաններում, քրեակատարողական

հիմնարկներում (կ/գ) կատարվել են 155 ստուգումներ և ուսումնասիրություններ՝ անձանց պահելու պայմանների ու կարգի, զբոսանքի կազմակերպման գործընթացի, բուժօգնության կազմակերպման, տեսակցությունների տրամադրման հիմքերի ու կարգի, նյութակենցաղային ապահովման վիճակի վերաբերյալ, որոնց արդյունքում խախտում չի արձանագրվել:

ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից 2015թ. ընթացքում կայազորային կարգապահական մեկուսարաններում կատարվել են 84 ստուգումներ և ուսումնասիրություններ՝ անձանց պահելու պայմանների ու կարգի, զբոսանքի կազմակերպման գործընթացի, բուժօգնության կազմակերպման, տեսակցությունների տրամադրման հիմքերի ու կարգի, նյութակենցաղային ապահովման վիճակի վերաբերյալ, որոնց արդյունքում խախտում չի արձանագրվել:

Բացի կայազորային կարգապահական մեկուսարաններում և քրեակատարողական հիմնարկներում կատարված ուսումնասիրություններից, կայազորների զինվորական դատախազությունները ուսումնասիրություններ են կատարել նաև կարգապահական վաշտերում: Ուսումնասիրությունների ընթացքում խախտումներ չեն արձանագրվել:

2016թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումներում կատարվել է 99 (2015թ.՝ 6) ուսումնասիրություն, որոնց ընթացքում արձանագրվել է 21 (2015թ.՝ 21) խախտում:

Արձանագրված խախտումների հիմնական մասը շտկվել է տեղում, 4-ով զորամասերի հրամանատարերին ուղարկվել են հաղորդումներ, իսկ 1-ով ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2016թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից դատական ակտերի հարկադիր կատարման ստորաբաժանումներում իրականացվել է 4 (2015թ.՝ 4) ուսումնասիրություն: Խախտումներ չեն արձանագրվել:

2016թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության դատախազները դատապարտյալներին պատիժը կրելուց ազատելու գործերով դատարաններում մասնակցել են 7 (2015թ.՝ 36) միջնորդության քննությանը: Նշված 7 միջնորդությունից 4-ը (2015թ.՝ 34) վերաբերել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ գործերին, 3-ը՝ համաներման կիրառմանը:

2016թ. ընթացքում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված 3 (2015թ.՝ 2) և պատիժը պայմանականորեն չկիրառված 12 (2015թ.՝ 16) անձ գտնվելով փորձաշրջանի մեջ, զինվորական ծառայության ընթացքում կատարել են նոր հանցագործություններ:

2016թ. ընթացքում դատարանի որոշմամբ 4 (2015թ.՝ 8) անձի նկատմամբ նշանակվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:

9. Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման ոլորտ

Ֆիզիկական անձանց, իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունների աշխատակիցների կողմից կատարված հանցագործությունների, պետության շահերի, օրենքով նախատեսված դեպքերում՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, օրինականության խախտումների մասին դիմումների, բողոքների և առաջարկությունների (այսուհետ՝ դիմում), պետական մարմինների պաշտոնատար անձանց գրագրության սահմանված ժամկետներում արդյունավետ քննարկման, ինչպես նաև ՀՀ դատախազությունում քաղաքացիների և այլ անձանց ընդունելության հետ կապված աշխատանքները կազմակերպել է՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը և ղեկավարվել «Դատախազության մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը հաստատելու մասին» N 59 հրամանով հաստատված կանոնակարգով և իրավական այլ ակտերով:

2016թ. ՀՀ դատախազությունում ստացվել է 12086 (2015թ.՝ 11471) դիմում-բողոք, որոնցից 2445-ը (2015թ.՝ 2607) եղել է կրկնակի, 610-ը (2015թ.՝ 582) բավարարվել է, 1302-ը (2015թ.՝ 1039) մերժվել է, 6607-ը (2015թ.՝ 6672) ուղարկվել է այլ մարմին, 25 (2015թ.՝ 17) անանուն դիմում թողնվել է առանց քննարկման, 111-ը (2015թ.՝ 163) մնացել է անավարտ, 14-ը (2015թ.՝ 11) վերադարձվել է հեղինակներին, 97-ը (2015թ.՝ 112) թողնվել է առանց պատասխանի, 77-ը (2015թ.՝ 27) թողնվել է առանց լուծման, 101-ի (2015թ.՝ 91) թղթակցությունը դադարեցվել է, 3,033-ին (2015թ.՝ 2,668) տրվել է պարզաբանում, 102-ի (2015թ.՝ 85) քննարկման արդյունքում հարուցվել է քրեական գործ:

Հաշվետու ժամանակահատվածում միայն այս ոլորտում ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է 146 (2015թ. 221) դիմում, որոնցից 8-ը կամ 5.4%-ը (2015թ.՝ 5-ը կամ 2.2%)՝ կրկնակի, իսկ 40-ը կամ 27.3%-ը (2015թ.՝ 20-ը կամ 9%)՝ կրկնօրինակ դիմում: Նշված 146 դիմումից 32-ը կամ 21.9%-ը (2015թ.՝ 35-ը կամ 15.8%) բավարարվել է, 0-ն (2015թ.՝ 2-ը կամ 0.9%) մերժվել է, 10 կամ 6.9% դիմում (2015թ.՝ 15 կամ 6.8%) թողնվել է առանց պատասխանի, որոնցից 9-ը (2015թ.՝ 2) թողնվել է առանց լուծման՝ տրամաբանությունից ու իմաստից զուրկ լինելու և այլ պատճառով, 64 կամ 43.8% դիմումի (2015թ.՝ 108 կամ 48.9%) տրվել է պարզաբանում, 17 կամ 11.6% դիմում (2015թ.՝ 25 կամ 11.3%) ուղարկվել է այլ մարմիններ՝ ընթացքը լուծելու համար, 12 կամ 8.2% դիմում (2015թ.՝ 34 կամ 15.4%) ուղարկվել է դատախազության այլ ստորաբաժանում՝ դիմումում նշված փաստարկները ստուգելու կամ ներկայացված բողոքը օրենքով սահմանված կարգով քննարկելու համար, 1 դիմում կամ 0.7%-ի թղթակցությունը դադարեցվել է:

Դիմողի անունը, ազգանունը, հասցեն և ստորագրությունը նշված չլինելու պատճառով անհետևանք թողնված, դիմումատուին վերադարձված, անընթեռնելի լինելու պատճառով անպատասխան թողնված, դատախազության գործունեությանը միջամտելու պատճառով լուծում չստացած, թղթակցությունը դադարեցված, ինչպես նաև անավարտ դիմումներ չկան:

2016 թվականի ընթացքում դատախազների կողմից կազմակերպվել է քաղաքացիների 2204 ընդունելություն (2015թ.՝ 2065), որոնցից 155-ը (2015թ.՝ 147 և 2014թ. 110) **ՀՀ գլխավոր դատախազությունում:**

Այդ թվում՝

1) ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների մոտ կազմակերպվել է 15 (2015թ.՝ 9) ընդունելություն:

2) ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների և բաժինների պետերի, վարչությունների պետերի տեղակալների մոտ՝ 30 ընդունելություն (2015թ.՝ 18):

3) ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների դատախազների մոտ 26 ընդունելություն (2015թ.՝ 14):

4) 84 քաղաքացի (2015թ.՝ 106) ընդունվել է ՀՀ դատախազության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժնում:

Ընդունելության ներկայացած քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ տրվել են պատշաճ պարզաբանումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են ընդունելություններ դատավարական հսկողություն իրականացնող դատախազների և նրանց վերադասների մոտ, դիմումներն ուղարկվել են դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ կամ այլ մարմին՝ ըստ ենթակայության ընթացքը լուծելու և քաղաքացիներին պատասխանելու համար:

Կարևորելով Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության թափանցիկությունն ու կանխատեսելիությունը, ինչպես նաև վարույթի մասնակիցների իրավունքների պատշաճ պաշտպանությունն ապահովելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի հրամանով սահմանվել են քաղաքացիների ընդունելության կարգն ու պայմանները, հստակեցվել են դատախազների նախաձեռնությամբ քաղաքացիների ընդունելության ընթացակարգերը, դատախազներին հանձնարարվել է ավելի հաճախ կազմակերպել վարույթի մասնակիցների, նրանց ներկայացուցիչների ընդունելություն՝ անհրաժեշտության դեպքում անձամբ նախաձեռնություն ցուցաբերելով:

ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում՝

1) ՀՀ դատախազությունը դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացրել 39078 (2015թ.՝ 38136) նյութի նախապատրաստման, 18540 (2015թ.՝ 19141) քրեական գործի հետաքննության և նախաքննության նկատմամբ,

2) դատախազների կողմից վերացվել է հետաքննության և նախաքննության մարմինների կողմից կայացված 1184 (2015թ.՝ 1427) որոշում,

3) ՀՀ նախաքննական մարմինների կողմից 2017թ. է փոխանցվել 2508 (2016թ.՝ 3157) քրեական գործ,

4) քրեական գործերով և նյութերով հետաքննության և նախաքննության մարմիններին տրվել է 2688 (2015թ.՝ 1945) գրավոր ցուցում,

5) մինչդատական վարույթում դատախազների կողմից դատարան է ներկայացվել և դատախազների մասնակցությամբ քննվել է 490 (2015թ.՝ 171) միջնորդություն (որպես խափանման միջոց կիրառվել են կալանքը, խուզարկության և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ),

6) դատարանում մեղադրանքը պաշտպանվել է 2339 (2015թ.՝ 2282) քրեական գործով,

7) դատախազության կողմից քրեական գործերով դատական ակտերի՝ դատավճիռների, վճիռների և որոշումների դեմ բերվել է 439 (2015թ.՝ 445) վերաքննիչ և 99 (2015թ.՝ 107) վճռաբեկ բողոք: Ընդ որում, 439 (2015թ.՝ 445) վերաքննիչ բողոքից բավարարվել է 89-ը (2015թ.՝ 69), իսկ 99 (2015թ.՝ 107) վճռաբեկ բողոքից՝ 12-ը (2015թ.՝ 12):

8) ՀՀ դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության մասով հարուցվել է 118 (2015թ.՝ 125) հայց, որոնցից դատարանի կողմից քննության է առնվել 42-ը (2015թ.՝ 55), բավարարվել է 38-ը (2015թ.՝ 44): Կատարվել է 3450 (2015թ.՝ 3407) ստուգում, ուսումնասիրություն, ամփոփում: Ներկայացվել են 1078 (2015թ.՝ 1065) նախազգուշացում, հաղորդում, միջնորդագիր և միջնորդություններ:

9) ՀՀ դատախազությունում ստացվել և ընթացք է տրվել 12086 (2015թ.՝ 11471) դիմումի, բողոքի:

10. ՀՀ դատախազության պետական ծառայության ոլորտ

2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմը կատարել է «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և իրավական այլ ակտերով Հայաստանի Հանրապետության դատախազությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանն օժանդակող աշխատանքները:

Այսպես,

1) Ֆինանսական և հաշվապահական հաշվառման, գնումների և նյութատեխնիկական ապահովման ոլորտ.

2016 թվականին իրականացվել է դատախազության հաշվապահական հաշվառման գործառնությունների վարումը, ամփոփումը և վերահսկողությունը, կազմվել են բանկային հաշիվների, աշխատավարձի, մատակարարների հետ հաշվարկների, ապրանքանյութական արժեքների շարժի կուտակիչ տեղեկագրերը, կազմվել և համապատասխան մարմիններին են ներկայացվել հաշվապահական հաշվեկշիռները և հաշվետվությունները, ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, պահված եկամտահարկի հաշվարկը, վիճակագրական հաշվետվությունները:

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել և Client Treasuty համակարգ են մուտքագրվել տարեկան ծախսերի պահպանման նախահաշիվները, ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցերը, կնքված պայմանագրերի վերաբերյալ քաղվածքները, բյուջետային փոխանցագրերը, վճարման հանձնարարագրերը, հայտերը, հավաստագրերը:

Կազմվել և ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացվել տնտեսագիտական դասակարգման հոդվածների վերաբաշխման հայտերը և գնումների պլանում փոփոխությունների ու լրացումների մասին ծանուցումները, հաշվարկվել և վճարման համար սոցիալական ապահովության պետական ծառայություն են ներկայացվել դատախազության աշխատակիցների երկարամյա ծառայության կենսաթոշակային ապահովության ծախսի հայտերը և վճարման ցուցակները:

ՀՀ վարչապետի 2015թ. դեկտեմբերի 15-ի՝ «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» N 1217-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցին և մեթոդական ցուցումներին համապատասխան՝ կազմվել և ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացվել դատախազության 2017-2019թթ. միջնաժամկետ ծախսերի հայտերը և 2017 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը:

Սկզբնական փաստաթղթերի հիման վրա իրականացվել է մուտքագրված և ելքագրված ապրանքանյութական արժեքների սինթետիկ և անալիտիկ հաշվառումը:

2016թ, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառումն ապահովելու նպատակով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի հուլիսի 7-ի N 457-Ն հրամանի համաձայն՝ կազմվել և Հայաստանի Հանրապետության

ֆինանսների նախարարություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության դատախազության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

2016 թվականին «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, անցկացվել է ապրանքների, աշխատանքների ձեռքբերման և ծառայությունների մատուցման շուրջ 101 մրցույթ, կազմվել են համապատասխան պայմանագրեր: «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ հաշվետվություն է ներկայացվել 2016 թվականի եռամսյակային, կիսամյակային և 9 ամիսների ընթացքում կատարված գնումների վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված ձևաչափերին համապատասխան կազմվել է 2017 թվականի գնումների անվանացանկը:

Իրականացվել են դատախազության աշխատակազմի՝ Շիրակի, Տավուշի, Սյունիքի մարզերի, թիվ 1, թիվ 2 և թիվ 3 կայազորների զինվորական դատախազությունների տարածքային ստորաբաժանումների շենքերի, օժանդակ տարածքների և գույքային պայմանների ուսումնասիրություններ:

2) Անձնակազմի կառավարման ոլորտ.

Ապահովվել է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ դատախազության անձնակազմին և նրա գործունեության երաշխիքներին վերաբերող պահանջների, ինչպես նաև անձնակազմի հարցերով՝ գլխավոր դատախազի հրամանների, ցուցումների և կարգադրությունների կատարումը:

ՀՀ դատախազությունը 01.01.2016թ. դրությամբ ունեցել է 337 հաստիքային միավոր: 2016 թվականի ընթացքում դատախազության համակարգում աշխատանքի է ընդունվել 32 դատախազ: ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով 140 դատախազ տեղափոխվել է տարբեր պաշտոնների: Համակարգից ազատվել է 25 դատախազ:

01.01.2017թ. դրությամբ թափուր է դատախազի 12 հաստիք:

2016 թվականին 27 հավակնորդ ընդգրկվել է դատախազների թեկնածությունների ցուցակում, որոնցից 9-ը նաև դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում: «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվածներից 9-ն ուղարկվել են «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ՝ ուսումնառության ծրագիր անցնելու նպատակով:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար դիմել է 167 անձ, որոնցից 61-ի վերաբերյալ տրվել է դրական, իսկ 86-ի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն, 20 թեկնածու չի ներկայացել:

Գումարվել է գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի 17 նիստ: 7 դատախազի վերաբերյալ կայացվել է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու մասին որոշում: Արտահերթ կարգով դատախազների առաջխաղացման ցուցակ է ընդգրկվել 49 դատախազ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով խրախուսվել է 62 դատախազ: Գլխավոր դատախազի հրամաններով խրախուսվել են նաև այլ մարմինների աշխատակիցներ:

Դատախազության աշխատակազմի ղեկավարի հրամաններով խրախուսվել է 48 աշխատակից:

2016թ. կարգապահական տույժի է ենթարկվել 1 դատախազ:

2016 թվականի ընթացքում հերթական դասային աստիճան է շնորհվել 51 դատախազի:

ՀՀ դատախազությունից կենսաթոշակների նշանակման հանձնաժողովին է ներկայացվել 28 դատախազի կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ դիմում, որոնցից 11-ի նկատմամբ տրվել է դրական եզրակացություն, իսկ 17-ի նկատմամբ՝ բացասական:

Կազմակերպվել է տարբեր բուհերի 46 ուսանողի արտադրական պրակտիկայի անցկացումը Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում:

Անցկացված բաց մրցույթների արդյունքում 26 անձ նշանակվել է պետական ծառայության համապատասխան պաշտոնների: 2016թ. ընթացքում աշխատանքից ազատվել է դատախազության աշխատակազմի 81 աշխատող, որոնցից 75-ը՝ դիմումի համաձայն, իսկ 6-ը՝ պայմանագրի ժամկետը լրանալու պատճառով:

Աղյուսակ 1

№		Սպանություններ				Սպանության փորձեր			
		2016թ.		2015թ.		2016թ.		2015թ.	
		ընդ.	չբաց.	ընդ.	չբաց.	ընդ.	չբաց.	ընդ.	չբաց.
1.	Շենգավիթ	2	0	3	1	4	0	1	1
2.	Էրեբունի և Նուբարաշեն	4	0	2	0	1	0	2	0
3.	Կենտրոն և Նորք-Մարաշ	4	0	2	0	1	0	1	0
4.	Արաբկիր	2	1	0	0	3	0	1	0
5.	Քանաքեռ-Զեյթուն	0	0	4	1	2	0	1	0
6.	Մալաթիա-Սեբաստիա	5	1	3	1	2	0	0	0
7.	Ավան և Նոր Նորք	5	3	2	1	2	1	3	0
8.	Աջափնյակ և Դավթաշեն	5	0	6	1	1	0	3	0
9.	Մետրոպոլիտեն	0	0	0	0	0	0	0	0
10.	Արագածոտն	1	0	4	2	0	0	2	1
11.	Արարատ	2	0	5	4	1	0	3	0
12.	Արմավիր	4	2	4	2	4	0	5	0
13.	Գեղարքունիք	2	0	2	0	1	0	2	0
14.	Կոտայք	5	4	3	0	7	1	2	0
15.	Լոռի	10	1	2	0	2	0	3	1
16.	Շիրակ	7	1	4	2	1	0	1	0
17.	Սյունիք	1	1	1	0	0	0	2	0
18.	Տավուշ	6	2	3	0	4	0	3	1
19.	Վայոց ձոր	1	0	2	0	0	0	0	0
20.	Զվարթնոց	0	0	0	0	0	0	0	0
	Ընդ. Երևանում	**27**	**5**	**22**	**5**	**16**	**1**	**12**	**1**
	Ընդ. ՀՀ-ում	**66**	**16**	**52**	**15**	**36**	**2**	**35**	**4**

Աղյուսակ 2

№		Դիպավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքեր				որից՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքեր			
		2016թ.		2015թ.		2016թ.		2015թ.	
		ընդ.	հրաց.	ընդ.	հրաց.	ընդ.	հրաց.	ընդ.	հրաց.
1.	Շենգավիթ	64	5	57	4	9	1	13	3
2.	Էրեբունի և Նուբարաշեն	78	6	67	5	16	1	12	3
3.	Կենտրոն և Նորք-Մարաշ	71	11	97	7	14	4	14	2
4.	Արաբկիր	33	4	51	5	6	3	11	1
5.	Քանաքեռ-Զեյթուն	41	2	22	1	9	1	3	0
6.	Մալաթիա-Սեբաստիա	31	1	50	4	8	1	8	2
7.	Ավան և Նոր Նորք	30	3	33	5	5	2	7	3
8.	Աջափնյակ և Դավթաշեն	62	5	60	3	12	3	10	1
9.	Մետրոպոլիտեն	0	0	0	0	0	0	0	0
10.	Արագածոտն	55	2	50	2	6	2	7	2
11.	Արարատ	90	2	79	2	14	2	9	1
12.	Արմավիր	95	7	86	5	20	6	19	4
13.	Գեղարքունիք	72	3	63	1	8	3	3	0
14.	Կոտայք	100	5	116	10	15	3	20	8
15.	Լոռի	132	1	114	3	22	1	12	3
16.	Շիրակ	83	9	60	1	25	5	15	0
17.	Սյունիք	46	1	36	0	5	1	4	0
18.	Տավուշ	50	0	49	0	5	0	6	0
19.	Վայոց ձոր	14	1	5	0	1	0	0	0
20.	Զվարթնոց	2	0	0	0	0	0	0	0
	Ընդ. Երևանում	**410**	**37**	**437**	**34**	**79**	**16**	**78**	**15**
	Ընդ. ՀՀ-ում	**114**	**68**	**1095**	**58**	**200**	**39**	**173**	**33**

Աղյուսակ 3

№		Բնակարանային գողություններ							
		2013թ.		2014թ.		2015թ.		2016թ.	
		ընդ.	չբաց.	ընդ.	չբաց.	ընդ.	չբաց.	ընդ.	չբաց.
1.	Շենգավիթ	141	76	107	80	89	58	95	62
2.	Էրեբունի և Նուբարաշեն	63	50	89	64	80	64	70	57
3.	Կենտրոն և Նորք-Մարաշ	126	103	125	101	108	90	103	79
4.	Արաբկիր	148	107	135	103	121	92	98	80
5.	Քանաքեռ-Զեյթուն	61	47	54	32	51	40	63	47
6.	Մալաթիա-Սեբաստիա	98	91	126	88	96	76	76	57
7.	Ավան և Նոր Նորք	114	80	134	104	116	95	111	91
8.	Աջափնյակ և Դավթաշեն	100	84	130	98	141	107	92	71
9.	Արագածոտն	9	5	12	10	21	11	16	7
10.	Արարատ	89	44	77	49	95	62	56	34
11.	Արմավիր	54	35	80	40	101	46	71	44
13.	Գեղարքունիք	27	14	27	9	33	18	43	15
14.	Կոտայք	138	72	191	116	146	113	171	114
15.	Լոռի	90	31	49	25	73	33	70	34
16.	Շիրակ	46	23	47	29	49	29	51	23
17.	Սյունիք	5	0	26	13	29	13	39	15
18.	Տավուշ	11	6	27	4	17	5	23	6
19.	Վայոց ձոր	3	2	6	4	3	0	2	2
	Ընդ. Երևանում	**851**	**638**	**900**	**670**	**802**	**622**	708	544
	Ընդ. ՀՀ-ում	**1323**	**870**	**144**	**969**	**1369**	**952**	125	838

Աղյուսակ 4

№		անձնական գույքի հափշտակության դեպքեր				որից՝ ավազակության դեպքեր			
		2016թ.		2015թ.		2016թ.		2015թ.	
		ընդ.	հրաց.	ընդ.	հրաց.	ընդ.	հրաց.	ընդ.	հրաց.
1.	Շենգավիթ	658	218	628	245	3	2	7	2
2.	Էրեբունի և Նուբարաշեն	452	214	408	219	2	0	1	1
3.	Կենտրոն և Նորք-Մարաշ	1078	562	987	531	4	0	10	1
4.	Արաբկիր	606	334	552	294	3	2	3	1
5.	Քանաքեռ-Զեյթուն	263	136	257	107	1	0	2	1
6.	Մալաթիա-Սեբաստիա	482	137	460	155	4	2	2	2
7.	Ավան և Նոր Նորք	506	280	403	215	2	0	2	1
8.	Աջափնյակ և Դավթաշեն	415	237	442	253	5	2	3	2
9.	Մետրոպոլիտեն	4	0	9	0	0	0	0	0
10.	Արագածոտն	196	53	162	47	1	0	1	1
11.	Արարատ	332	110	352	128	2	1	7	6
12.	Արմավիր	336	134	321	110	6	5	3	0
13.	Գեղարքունիք	166	40	130	37	4	2	2	0
14.	Կոտայք	616	258	525	294	5	4	2	2
15.	Լոռի	349	94	341	98	1	1	2	1
16.	Շիրակ	217	72	212	92	7	1	4	2
17.	Սյունիք	190	38	200	60	2	1	0	0
18.	Տավուշ	166	25	210	40	1	0	2	1
19.	Վայոց ձոր	47	6	50	3	0	0	1	0
20.	Զվարթնոց	5	2	15	6	0	0	0	0
	Ընդ. Երևանում	**4464**	**2118**	**4146**	**2019**	**24**	**8**	**30**	**11**
	Ընդ. ՀՀ-ում	**7084**	**2950**	**6664**	**2934**	**53**	**23**	**54**	**24**